Տ. ԾԱՀԲԱՁՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

31 JAN 2018

Տ. ՇԱՀԲԱԶՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
# ՅԵՎ
# ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ
4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

2-ՐԴ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՊԵՏՀՐԱՏ

ԱՐԽԻՎ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Т. ШАХБАЗЯН
Армянский язык
грамматика и правописание
для IV класса
Гиз. Арм. ССР, Ереван, 1939 г.

II-284139գր

# 1. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԱԾԻ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. Հայաստանի յերիտասարդ գրողների կողմից ընկեր Ստալինին նվիրված հետևյալ նամակ-բանաստեղծությունից ջոկեցեք պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունները։



Դու մեր բարի Արագած, մեր խնդության ակն-աղբյուր,
Մեր վոսկեհոս մուսագետ, դու ամեն տան վոսկի հյուր,
Մեր դյութական Ստալին,
Յե՞րբ ես գալու մեզ գոնաղ, —
Մեր լեռները ծաղկավետ, Արագածին ցողաշաղ,
Վորի կանաչ լանջերը օթևան են հոտերի,
Վորի զմրուխտ ժայռերը ակունքներ են աղբյուրի,
Յեվ ջրերի պես մաքուր, աղբյուրներից սառնորակ

Կաթն է հոսում լանջն ի վար՝ դեպի գյուղեր և քաղաք։
Այծյամներն են կախարդիչ ծաղկում նրա քերծերին,
Յե՞րբ ես գալու, որ լեռան արծիվների թևերին՝
Ծաղիկների մեջ պահած մեղր ու կարոտ բերենք քեզ.
Ո՛, յեկ մի հեղ, յերբ որ գաս, մեր լեռները բարձր ու վես
Կցածրանան ժպտալով—կանաչ ճամփա կտան քեզ։
Դու կատարումն ու կյանքն ես մեր դարավոր հույսերի՝
Հավերժաբուղխ շատրվան դու Լենինյան լույսերի—
Մեր անման Ստալին,—
Արի, բարի՛, հյուր յեկ մեզ...։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. Հայաստանի յերիտասարդ գրողների կողմից ընկեր Ստալինին նվիրված հետևյալ նամակ-բանաստեղծությունից ջոկեցե՛ք գոյականները և ածականները։

Մեր ձայնը քեզ, անմար արև, մեր սերը քե՜զ, ո՛վ իմաստուն,
Ողջո՜ւյն քեզ հայ ժողովրդից, որ վառ գարուն ունի սրտում։
Մեր գետերն են լեզու առել, մեր աղբյուրներն են կարկաչում,
Յերգիչները բլբուլ դառել, անուշ յերգով քեզ են կանչում։

Ուրախ լուրըդ յերբ որ լսվեց՝ կես գիշեր եր մի անդորրած,
Յեվ յերկնքի աչիկներից ժպտուն ցողեր տեղացին ցած,
Ծագել ցանկաց արևը վառ՝ ու քեզ գրկել հենց գիշերով,
Քնից յելան, համերգ տվին յերգիչները քո ջինջ սիրով։

Ու զողանջեց խոր գիշերը, բուրեցին սեր, յերգ ու խնդում
Մեր սրտերը, մեր արտերը, այգիները մեր ծով հանդում։



Լուսաբացին շուտ դուրս յեկած արևի հետ մեր միասին,
Ծաղկունքն ամեն նոր հիացքով շշնջացին կյանքիդ մասին։

Ժողովրդի հսկա սրտին շաղեց ցողեր նոր խնդության,
Մեր աչքերից մինչ սիրտը քո կապվեց սիրո մի ծիածան։
Ու գթառատ մի մոր նման Արագածը մեր վեհ, բարի,
Հիացմունքից իր ջրերը փոխեց կաթի, կաթնաղբյուրի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. Ներքևում տրված հատվածից արտագրեցե՛ք գոյականները և յուրաքանչյուրի դիմաց գրեցե՛ք, թե ինչ հոլովով է տրված։

Մոսկվայի կայարանը զարդարված է կարմիր դրոշներով, թարմ ծաղիկներով ու կանաչներով։

Կայարանում մեծ բազմություն կա։ Խորհուրդների մեծ մայրաքաղաքի լավագույն հարվածային բանվորները յեկել եյին դիմավորելու թանգագին հյուրերին։ Վագոններից դուրս յեկան զանազան տարազով մարդիկ։ Հյուրերի խումբը քայլեց դեպի քաղաք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. Ներքևում տրված նախադասությունների յենթակաների տակ մի գիծ քաշեցե՛ք, իսկ ստորոգյալների տակ՝ յերկու գիծ։

Լույսը բացվեց, արևը ծագեց, յերեխաներն արթնացան, զանգը հնչեց, դասերն սկսվեցին։

Նոր շենքեր կառուցվեցին։
Աշակերտը գնաց տուն։
Պլանը ժամանակին կատարվեց։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5. Ներքևում տրված նախադասություններից արտագրեցե՛ք նախ յենթակաները, ապա ստորոգյալները, հետո յենթակայի, ապա նաև ստորոգյալի լրացումները։

Վառ մանուշակը բուրմունքը սփռեց։ Փոքրիկ Աշխենը փունջ կապեց։ Ծաղկի բուրմունքը զգացվեց բոլորին։

Հերոս մեքենավարը գնացքը փրկեց։ Խիզախ ոդաչուները տիրեցին բևեռը։

## 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Կարդացեք և ասացեք՝ յերկրորդ սյունակում վո՞ր բառերն են փոխարինում Սուրիկը և ձկնորսները բառերին։

| | |
|---|---|
| 1. Սուրիկը կարթով ձուկ է վորսում։ | 1. Սուրիկը կարթով ձուկ է վորսում։ |
| 2. Սուրիկը հանկարծ ընկավ գետը։ | 2. Նա հանկարծ ընկավ գետը։ |
| 3. Ձկնորսներն ոգնության հասան։ | 3. Ձկնորսներն ոգնության հասան։ |
| 4. Ձկնորսներն ազատեցին Սուրիկին։ | 4. Նրանք ազատեցին Սուրիկին։ |

Անձերի անունների փոխարեն դրվող բառերը կոչվում են անձնական դերանուններ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. Արտագրեցեք ընդգծված բառերը և ասացեք՝ վորո՞նց փոխարեն են դրված։

Հեռախոսի մոտ խոսում է Գրիշան իր ընկեր Աշոտի հետ։



Կենտրո՛ն, միացրե՛ք 8—55։ Ո՞վ է խոսողը։

Լսի՛ր, Աշո՛տ, յես այսոր գնալու յեմ թատրոն։ Դու ուզո՞ւմ ես գալ։ Արամը զբաղված է։ Նա չի կարող գալ։



Յես, դու, նա անձնական դերանուններ են։
Յես — խոսողը դնում է իր անվան փոխարեն, և կոչվում է առաջին դեմքի դերանուն։
Դու — խոսողը գործածում է խոսակցի անվան փոխարեն, և կոչվում է յերկրորդ դեմքի դերանուն։
Նա — խոսողը գործածում է յերրորդ անձի անվան փոխարեն, և կոչվում է յերրորդ դեմքի դերանուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8. Արտագրեցեք հետևյալ ընդգծված բառերը։

Աշո՛տ, գիտե՞ս՝ քննությունները արդեն վերջացան։ Յես գերազանցիկ եմ։ Մենք «միջակ»-ից ցած գնահատականներ չունենք։ Դու խոսում ես միայն քո մասին, բայց դա բավական չէ։ Դուք բոլորդ պետք է լավ սովորեք։

Արամին տեսա. Նա շատ գոհ է իր գնահատականներից, բայց դասարանի առաջադիմությունն ստուգելիս պարզվեց, վոր նրանք «միջակ»-ից ցած գնահատականներ ունեն։ Խոստացել են յեկող տարի վերացնել։

> Գոյականների նման, անձնական դերանունները լինում են յեզակի և հոգնակի:
> Յեզակի յեն՝ յես, դու, նա:
> Հոգնակի յեն՝ մենք, դուք, նրանք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9. Արտագրեցեք հետևյալը և կետերի տեղը գրեք յես, դու, նա, մենք, դուք, նրանք:

... գնում եմ դպրոց: ... գնում ես դպրոց: ... գնում ենք դպրոց: ... գնում եք դպրոց:

... գնում ե դպրոց:

... գնում են դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10. Հետևյալ հոդվածից ջոկեցեք անձնական դերանունները:

## ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾ

Օգոստոսի մի ջինջ ու պայծառ առավոտ եր, յերբ մենք սկսեցինք բարձրանալ Արագած սարն ի վեր: Մենք ուրախ տրամադրությամբ բարձրանում եյինք, յերբ հանկարծ ուշադրությունս գրավեց արևածաղը:

Գուրգեն, դու չես ուզում տեսնել այս սքանչելի տեսարանը: Նա հիացած պատասխանեց՝ ասում եյին Արագածի արևածաղն աննման ե, մենք չեյինք հավատում: Տես, նրանք էլ հիացած նկարում են:

## 3. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11. Կետերի տեղը գրեք փակագծում յեղած անձնական դերանունները:

### Յեզակի

Ուղղ. ... սովորում եմ դպրոցում:
Սեռ. ... դասերը յես լավ եմ սովորում:



Տրակ. ... նվերներ տվեց դիրեկցիան:
Հայց. ... ուղարկեցին հանգստյան տուն:
Բաց. ... գոհ են բոլորը:
Գործ. ... պարծենում ե մեր դիրեկտորը:
Ներգ. ... աշխատելու մեծ յեռանդ կա:

(Յես, իմ, ինձ, ինձ, ինձնից, ինձնով, ինձնում):

### Հոգնակի

Ուղղ. ... սովորում ենք դպրոցում:
Սեռ. ... դասերը մենք լավ ենք սովորում:
Տրակ. ... նվերներ տվեց դիրեկցիան:
Հայց. ... ուղարկեցին հանգստյան տուն:
Բաց. ... գոհ են բոլորը:
Գործ. ... պարծենում ե մեր դիրեկտորը:
Ներգ. ... աշխատելու մեծ յեռանդ կա:

(Մենք, մեր, մեզ, մեզ, մեզնից, մեզնով, մեզնում):

### Առաջին դեմքի դերանվան հոլովումը

| | Յեզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| Ուղղական | յես | մենք |
| Սեռական | իմ | մեր |
| Տրական | ինձ | մեզ |
| Հայցական | ինձ | մեզ |
| Բացառական | ինձնից | մեզնից |
| Գործիական | ինձնով | մեզնով |
| Ներգոյական | ինձնում | մեզնում: |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12. Կետերի տեղը դրեցեք փակագծում յեղած անձնական դերանունները.

Յեզակի

Ուղղ. ... աշխատում ես գործարանում։
Սեռ. ... գործիքները դու խնամքով ես պահում։
Տրակ. ... տվին ստախանովականի կոչում։
Հայց. ... նշանակեցին ձեր բաժնի ղեկավար։
Բաց. ... շնորհակալ են բոլորը։
Գործ. ... վոգեվորվում են բանվորները։
Ներգ. ... նկատվում ե նվիրվածություն։

(դու, քո, քեզ, քեզ, քեզնից, քեզնով, քեզնում)։

Հոգնակի

Ուղղ. ... աշխատում ենք գործարանում։
Սեռ. ... գործիքները դուք խնամքով եք պահում։
Տրակ. ... տվին ստախանովականի կոչում։
Հայց. ... նշանակեցին գործարանի բաժինների ղեկավարներ։
Բաց. ... շնորհակալ են բոլորը։
Գործ. ... վոգեվորվում են բանվորները։
Ներգ. ... նկատվում ե նվիրվածություն։

(Դուք, ձեր, ձեզ, ձեզ, ձեզնից, ձեզնով, ձեզնում)։

Յերկրորդ դեմքի դերանվան հոլովումը

| | Յեզակի | Հոգնակի |
|---|---|---|
| Ուղղական | դու | դուք |
| Սեռական | քո | ձեր |
| Տրական | քեզ | ձեզ |
| Հայցական | քեզ | ձեզ |
| Բացառական | քեզնից | ձեզնից |
| Գործիական | քեզնով | ձեզնով |
| Ներգոյական | քեզնում | ձեզնում։ |



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13. Կետերի տեղը դրեք փակագծում յեղած անձնական դերանունները։

Յեզակի

Ուղղ. ... աշխատում ե կոլտնտեսության մեջ։
Սեռ. ... աշխատանքը գնահատվում ե։
Տրակ. ... հանձնեցին ցանքսերի հսկողությունը։
Հայց. ... նշանակեցին բրիգադիր։
Բաց. ... ստանում են աշխատանքի ծրագրերը։
Գործ. ... հպարտանում են կոլտնտեսականները։
Ներգ. ... կա մեծ յեռանդ։

(Նա, Նրա, Նրան, Նրան, Նրանից, Նրանով, Նրանում)։

Հոգնակի

Ուղղ. ... աշխատում են կոլտնտեսության մեջ։
Սեռ. ... աշխատանքը գնահատվում ե։
Տրակ. ... հանձնեցին ցանքսերի հսկողությունը։
Հայց. ... նշանակեցին բրիգադիրներ։
Բաց. ... ստանում են աշխատանքի ծրագրերը։
Գործ. ... հպարտանում են կոլտնտեսականները։
Ներգ. ... կա մեծ յեռանդ։

(Նրանք, Նրանց, Նրանց, Նրանց, Նրանցից, Նրանցով, Նրանցում)։

Յերրորդ դեմքի դերանվան հոլովումը

| | Յեզակի | հոգնակի |
|---|---|---|
| Ուղղական | նա | նրանք |
| Սեռական | նրա | նրանց |
| Տրական | նրան | նրանց |
| Հայցական | նրան | նրանց |
| Բացառական | նրանից | նրանցից |
| Գործիական | նրանով | նրանցով |
| Ներգոյական | նրանում | նրանցում։ |

Անձնական դերանունների տրական և հայցական հոլովներն իրար նման են թե՛ յեզակիում և թե՛ հոգնակիում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14. Համեմատեցե՛ք անձնական դերանունների հոլովները գոյականների հոլովների հետ և ասացե՛ք, վո՞ր հոլովներն իրար նման են իրենց վերջավորություններով։

| | Յեզակի | | Հոգնակի | |
|---|---|---|---|---|
| | Դերանուն | Գոյական | Դերանուն | Գոյական |
| Ուղղ. | Յես | Քար | Մենք | Քարեր |
| Սեռ. | Իմ | Քարի | Մեր | Քարերի |
| Տրակ. | Ինձ | Քարի | Մեզ | Քարերի |
| Հայց. | Ինձ | Քար | Մեզ | Քարեր |
| Բաց. | Ինձնից | Քարից | Մեզնից | Քարերից |
| Գործ. | Ինձնով | Քարով | Մեզնով | Քարերով |
| Ներգ. | Ինձնում | Քարում | Մեզնում | Քարերում |

Անձնական դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովների վերջավորությունները նման են գոյականների նույն հոլովների վերջավորություններին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15. Կետերի տեղը գրեցե՛ք փակագծում տրված անձնական դերանունները պահանջված հոլովով։

... (յես), ... (դու) և ... (նա) գնահատականները գերազանց են։ ... (յես), ... (դու) և ... (նա) գրքեր նվիրեցին։ ... (յես), ... (դու) և ... (նա) սիրում են բոլոր



ուսուցիչները։ ... (յես), ... (դու) և ... (նա) որինակ են վերցնում։ ... (յես), ... (դու) և ... (նա) պարծենում են։ ... (յես), ... (դու) և ... (նա) մեծ փոփոխություն է կատարվել։

Որինակ՝ իմ, քո և նրա գնահատականները գերազանց են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16. Հետևյալ հոդվածն արտագրեցե՛ք յերկու անգամ։ Առաջին դեմքի անձնական դերանունների փոխարեն գրե՛ք յերկրորդ և յերրորդ դեմքի դերանունները։

### Յեզակի

Յես գնում եյի դպրոց։ Ճանապարհին իմ գիրքը կորավ։ Հանկարծ ինձ հանդիպեց ընկերուհիս, նա ինձ շատ եր սիրում և ինձնից չեր ուզում հեռանալ։ Նա ինձնով պարծենում եր , վորովհետև ինձնում տեսնում եր վորոշ արժանիքներ։

### Հոգնակի

Մենք գնում եյինք դպրոց։ Ճանապարհին մեր գրքերը կորան։ Հանկարծ մեզ հանդիպեց ընկերուհիս, նա մեզ շատ եր սիրում և մեզնից չեր ուզում հեռանալ։ Նա մեզնով պարծենում եր, վորովհետև մեզնում տեսնում եր վորոշ արժանիքներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17. Հետևյալ հոդվածից ջոկեցե՛ք դերանունները և դիմացը նշանակեցե՛ք հոլովը, դեմքը և թիվը։

### ՄԻ ՔԱՆԴԵՔ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԵՐԸ

Սուրիկը վորոշել եր թռչունների ձվեր հավաքել։

Անտառի ճանապարհին նա պատահեց Ռուբիկին և ասաց.

— Ցես ու դու միասին անտառը տակն ու վրա կանենք։ Ինքդ այդ լավ գիտես։

Նրանք այսպես խոսելով հասան անտառ։

Հանկարծ լսվեց անտառապահի ձայնը.

— Սպասեցե՛ք, դուք դարձյալ թռչուններին նեղացնելու յեք գնում։ Ցես յերեկ ձեզ չասացի՞, վոր դուք թռչուններին հանգիստ թողնեք։ Բացի ոգուտից նրանք մեզ ի՞նչ վնաս են տվել։ Թռչունները մեր բարեկամներն են, և նրանց պաշտպանության համար մենք պիտի շահագրգռված լինենք։ Իսկ յեթե նրանց ձվերն այսօր յես հավաքեմ, վաղը՝ դու, մյուս որը՝ նա, ապա կարճ ժամանակից հետո անտառում այլևս թռչուն չենք ունենա։

Ցերեխաներն ամոթահար տուն վերադարձան։

Օրինակ՝ Նա.— ուղղ. հոլով, III դեմք, յեզակի թիվ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18. Արտագրեցե՛ք հետևյալ նամակը և ընդգծեցե՛ք Դուք, Ձեզ, Ձեր, Ձեզնից քաղաքավարական ձևերը։

## ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Ստացա Ձեր ուղարկած բացիկը։ Դուք գրում եք, վոր պետք է լուրջ ուշադրություն դարձնել դպրոցական պարապմունքների վրա։ Շուտով յես ձեզ կուղարկեմ իմ գնահատականները, վորից Դուք կիմանաք, թե վորչափով յես կատարում եմ Ձեր խորհուրդները։ Ձեզ բարևում են բոլոր դասընկերներս, վորոնք Ձեզնից քաղցր հիշողություններ ունեն։

Բարևներով՝ ԿՈՐՅՈՒՆ

Մեկին հարգանք ցույց տալու համար գործածում են՝ Դուք, Ձեզ, Ձեր, Ձեզնից բառերը. սրանք քաղաքավարական ձևեր են և գրվում են մեծատառով։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19. Հետևյալ հատվածից ընտրեցե՛ք անձնական դերանունները և կազմեցե՛ք նախադասություններ։

«Ուր էլ գնաք, ականջ դրեք ժողովրդի սրտի ձայնին,
Հաճախ սիրով նրան լսեք, մի՛շտ է անխառն նրա գինին,
Ցեվ պարտիզան խմբերը վողջ վարեք հզոր ձեր զորքի հետ,
Նրանց մեջ է ուժը հողի, ով հսկաներ ամենագետ։
Թռե՛ք, փռե՛ք ամենուրեք տղրուկ ու նենգ չար թշնամուն,
Վառեք արնոտ ցեղը նրա, մոխիրն ամեն տվեք քամուն»...

Դեմը յելավ մի սուրհանդակ՝ փախած ցարի սև բանակից։
— Մենք էլ անհող, աղքատ մարդիկ, ցարը զոռով է մեզ
բերել,
Հիմա գիտենք, թե դյուցազունն ում համար է կռվի յելել։
Ձեր զենքերն են յեղան ու թուր, մենք բերել ենք զենք
ու զրահ։
Հանձնվում ենք ձեր հավատին՝ կռվի յելնենք ցարի վրա։
Ասին նրանք, և Ստալին դյուցազնն ուրախ ու լուռ
խորհեց։
Արևի պես նա ժպտալով նրանց մի ալ դրոշ տվեց,
Զորքը նորից առաջ վարեց դեպի Լենին դյուցազնը մեծ։

(Հ. Շիրազ)

Օրինակ՝ Նրա գրքերը նոր են։

## 4. Բ Ա Յ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20. Հետևյալ բառերը գրեցե՛ք նկարների կարգով այնպես, վոր իմացվի, թե՝ ի՞նչ է անում կամ ի՞նչ է լինում ամեն մեկը։

Ցատկում է, փորում է, կոտրում է, վազում է, վառվում է, յեռում է, փախչում է, սղոցում է, վարում է:















ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21. Կատարած գործողություններով իմացեք առարկաները և նրանց անունները գրեցեք կետերի տեղը:

. . . . . . մայում է:
. . . . . . մռնչում է:
. . . . . . բառաչում է:
. . . . . . վրնջում է:

. . . . . . դայլայլում է:
. . . . . . բացվում է:
. . . . . . ծաղկում է:
. . . . . . հոսում է:
. . . . . . ծագում է:



11-284/39

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22. Արտագրեցեք և ընդգծեցեք այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ի՞նչ են անում առարկաները: Նրանց մոտ փակագծի մեջ գրեցեք և հարցերը:

Առյուծը մռնչում է: Գայլը ոռնում է: Խոզը կռնչում է: Արագիլը կափկափում է: Սոխակը դայլայլում է: Սարյակը ճռվողում է: Բուն վայում է: Կռունկը կռկռում է: Կաչաղակը կչկչում է: Ճնճղուկը ճռվողում է: Արջը մրթմրթում է:

Օրինակ՝ Առյուծը (ի՞նչ է անում) մռնչում է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23. Արտագրեցե՛ք՝ կետերի տեղը դնելով փակագծում տրված բառերը և ասացե՛ք՝ ինչ են լինում առարկաները։

Տերևը դեղնում է։ Ջուրը . . . ։ Սառույցը . . . ։ Ծառը . . . ։ Ռումբը . . . ։ Գետը . . . ։ Պտուղը . . . ։ Ծաղիկը . . . ։ Վառարանը . . . ։ Քամին . . . ։ Յերկինքը . . . ։ Անձրևը . . . ։ Յերկիրը . . . ։

(գոլորշիանում է, հոսում է, ծաղկում է, կանաչում է, տեղում է, պայթում է, վառվում է, պտտվում է, հալվում է, փչում է, վորոտում է, հասունանում է)։

> Այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի ինչ լինելը կամ ինչ անելը, կոչվում են բայ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24. Արտագրեցե՛ք հետևյալ վոտանավորը և ընդգծեցե՛ք բայերը։

### Լ Ո Ւ Ս Ի Ն Ը

Գիշերվա մթնում
Աստղերն են ծփում,
Լուսինը վերից
Ժպտում է նորից։
Շողում է կրկին
Դեմքով ժպտերես

Յեվ նա աստղերին
Ասում է կարծես՝
Կգա առավոտ,
Կշողա արև,
Կայցելեն ձեզ մոտ
Տրակտոր ու կոմբայն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25. Հետևյալ վոտանավորից արտագրեցե՛ք միայն բայերը։

Կապույտ ծովն է ալեկոծվում,
Յեվ շնչում են հովերը զով,
Իսկ մենք լողում ենք շատ հեռու,
Սավառնում ենք նոր բարձունքով։
Գնում ենք մենք առաջ անահ,



Ինչպես արևը՝ յերկինքում,
Կառուցում ենք մարտեն, դոմնա,
Մեծ զավոդներ ենք վեր ձգում։

(Յանկա Կուպալա)

## 5. ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26. Արտագրեցե՛ք միայն դերանունները և բայերը։

| Յեզակի | Հոգնակի |
|---|---|
| Յես գնում եմ դպրոց։ | Մենք գնում ենք դպրոց։ |
| Դու գնում ես թատրոն։ | Դուք գնում եք թատրոն։ |
| Նա գնում է կինո։ | Նրանք գնում են կինո։ |
| Յես կարդում եմ գիրք։ | Մենք կարդում ենք գիրք։ |
| Դու կարդում ես նամակ։ | Դուք կարդում եք նամակ։ |
| Նա կարդում է թերթ։ | Նրանք կարդում են թերթ։ |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27. Արտագրելիս կետերի տեղը գրե՛ք խաղում եմ բայը՝ համապատասխան վերջավորություններով։

| | |
|---|---|
| Յես . . . (ինչ եմ անում) | Մենք . . . (ինչ ենք անում) |
| Դու . . . (ինչ ես անում) | Դուք . . . (ինչ եք անում) |
| Նա . . . (ինչ է անում) | Նրանք . . . (ինչ են անում) |

Օրինակ՝ Յես խաղում եմ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28. Հետևյալ հոդվածի մեջ յես, դու, նա անձնական դերանունները փոխարինեցե՛ք մենք, դուք, նրանք դերանուններով և ընդգծեցե՛ք բայերի վերջավորությունները։

Յես գնացի դպրոց, դու գնացիր տուն, իսկ նա գնաց կինո։ Յես դպրոցից յեկա տուն, դու կինոյից յեկար դպրոց, իսկ նա կինոյից յեկավ տուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29. Հետևյալ նախադասություններն արտագրեցեք՝ մենք, դուք, նրանք դերանունները փոխելով յես, դու, նա դերանուններով:

Մենք աշխատում ենք հանքում:

Դուք աշխատում եք գործարանում:

Նրանք աշխատում են հանքերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30. Հետևյալ նախադասություններն արտագրեցեք՝ դարբին, հյուսն և կոմբայն բառերը հոգնակի դարձնելով:

Դարբինը շիկացնում է, կռում է և կոփում է:

Հյուսնը կտրում է, հղկում է և շինում է:

Կոմբայնը հնձում է, մանրում է և զատում է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31. Հետևյալ հոդվածի կետերի տեղը դրեք համապատասխան բայերը:



## ՀՅՈՒՍՆԸ, ՏՐԱԿՏՈՐԻՍՏԸ ՅԵՎ ԱՇԱԿԵՐՏԸ

Հյուսնը տրակտորիստին ասում է՝ «Յես . . . տախտակը, դու . . . արտը, իսկ նա (աշակերտը) . . . դասը»:

Աշակերտը հյուսնին ասում է՝ «Յես . . . դասը, դու . . . տախտակը, իսկ նա (տրակտորիստը) . . . արտը»:

Տրակտորիստն աշակերտին ասում է՝ «Յես . . . արտը, դու . . . դասը, իսկ նա (հյուսնը) . . . տախտակը»:



Բայերի վերջավորությունները փոփոխվում են և թվով ու դեմքով համաձայնեցվում են անձնական դերանուններին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32. Հետևյալ հոդվածն արտագրեցեք յերկու անգամ՝ առաջին անգամ յես դերանունը փոխարինեցեք դու դերանունով, իսկ յերկրորդ անգամ՝ նա դերանունով:

## ՅԵՍ ԻՆՉՊԵՍ ԵՄ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՈՐՍ

Առավոտյան յես արթնանում եմ, հագնվում, լվացվում, սանրվում, ապա նախաճաշում եմ և գրքերս վերցրած՝ գնում եմ դպրոց: Դպրոցում լսում եմ ուսուցիչներին, ակտիվ կերպով մասնակցում եմ դպրոցական պարապմունքներին:

Դասերից հետո մի ժամով գնում եմ ընթերցարան, կարդում եմ և վերադառնում տուն՝ ցերեկվա ժամը յերկուսին: Ժամի յերեքին ճաշում եմ, մի ժամ հանգստանում եմ, վորից հետո գնում եմ զբոսանքի: Զբոսանքից հետո գնում եմ պիոներական ջոկատի պարապմունքներին: Յերեկոյան նորից պատրաստում եմ դասերս, ընթերցում եմ և քնում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33. Շեղագրով տպված բառերի տեղը գրեցեք փակագծում յեղած բառերը և բայերը փոփոխեցեք ինչպես հարկավոր է:

Դու սիրում ես լողալ (յերեխաները): Ձկնորսները ձուկ են բռնում (մենք): Յերեխաները մարմնամարզությամբ են զբաղվում (դուք): Ձիերը հոգնածությունից ծանր են շնչում (դու): Աշակերտները վաղ առավոտյան դպրոց են գնում (նա): Բանվորները առավոտյան աշխատանքի յեն գնում (յես): Աշակերտները դպրոցում սովորում են (դու): Կոլտնտեսականները դաշտում աշխատում են (նա): Յես

այսօր քաղաք եմ գնալու (ուսուցիչները)։ Պիոներները լագեր են գնում (նա)։ Հովիվները սարն են բարձրանում (դու)։ Աղջիկները ծաղիկ են հավաքում (նա)։ Տղաները խաղում են (յես)։ Կոմանդիրները շարում են (դու)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34. Հետևյալ ոտանավորից ջոկեցեք բայերը և որոշեցեք նրանց թիվն ու դեմքը։

Հովիվ, հովվուհի նստոտած շարքով՝
Կթում են ուրախ և անհոգ խնդում,
Յերբեմն էլ այրված անուշիկ յերգով
Սեր են զարթեցնում մեկ-մեկի սրտում։
Վերջացավ արդեն ոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը.
Մեկն էլ գդակը շարժելով ոդում,
Դեռ գառնարածին՝ «հեյ, յեկ» է կանչում.
Յերկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հոտը յերևաց.
Խառնվելով նրանք մայրերի հոտին՝
Բերկրանքի հույզով մայում են ցրված.
Կանչում են, բայում գառն ու մաքին,
Անուշ ձայներով փնտրում են միմյանց.
Վորը գտնելով իրա գառնուկին,
Ծծել է տալիս, փայելով սրտանց,
Վորը խաղում է մոր հետ կուշտ փորով,
Վորն էլ մնում է տխուր մայելով.
Յեվ ամեն անգամ գառը մեր տալիս
Կարծես թե անուշ համերգ են տալիս։

(Վ. Միրաքյան)



# 6. ԲԱՅԻ ՆԵՐԿԱ, ԱՆՑՅԱԼ ՅԵՎ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35. Հետևյալ նախադասությունները կարդացեք համապատասխան նկարների կարգով։



Մեքենան հնձեց, մեքենան հնձում է, մեքենան հընձելու յե։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36. Կառուցել և կտրել բայերով կազմեցեք նկարների բովանդակությանը համապատասխանող նախադասություններ։





Բայերը կարող են ունենալ ներկա, անցյալ և ապառնի ժամանակների ձևեր։

Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է հիմա, այսինքն խոսելու պահին։

Անցյալ ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվել է անցյալում, այսինքն խոսելու ժամանակից առաջ։

Ապառնի ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվելու յե հետո, այսինքն խոսելու ժամանակից հետո։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37. Ձեր տետրակներում հետևյալ որինակի ձևով տվեք խաղալ, պարել և յերգել բայերի յերեք ժամանակները։

| Ներկա | Անցյալ | Ապառնի |
|---|---|---|
| Յես կարդում եմ | Յես կարդացի | Յես կարդալու յեմ |
| Յես գնում եմ | Յես գնացի | Յես գնալու յեմ |
| Յես հագնվում եմ | Յես հագնվեցի | Յես հագնվելու յեմ |



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38. Արտագրեցեք՝ լրացնելով անցյալ և ապառնի ժամանակները։

| Ներկա | Անցյալ | Ապառնի |
|---|---|---|
| Կառուցում եմ | . . . . . . . | . . . . . . . |
| Սովորում եմ | . . . . . . . | . . . . . . . |
| Հետաքրքրվում եմ | . . . . . . . | . . . . . . . |
| Ոժանդակում եմ | . . . . . . . | . . . . . . . |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39. Հետևյալ բայերը դասավորեցեք յերեք սյունակներում ըստ գործողության ցույց տված ժամանակի։

Յես կարդացի։ Յես կարդում եմ։ Յես կարդալու յեմ։ Յես գրելու յեմ։ Յես գրեցի։ Յես գրում եմ։ Դու գնում ես։ Դու գնալու յես։ Դու գնացիր։ Դու խաղալու յես։ Դու խաղացիր։ Դու խաղում ես։ Նա յերգում է։ Նա յերգելու յե։ Նա յերգեց։ Նա վազեց։ Նա վազում է։ Նա վազելու յե։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40. Արտագրեցեք միայն դերանունները և բայերը։

| | |
|---|---|
| Յես գնում եմ Թբիլիսի։ | Մենք գնում ենք Թբիլիսի։ |
| Դու գնում ես Բաքու։ | Դուք գնում եք Բաքու։ |
| Նա գնում է Մոսկվա։ | Նրանք գնում են Մոսկվա։ |

## ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41. Հետևյալ ձևով խոնարհեցեք սովորել, պատմել և նկարել բայերը.

| Յեզակի | Հոգնակի |
|---|---|
| Խաղում եմ | Խաղում ենք |
| Խաղում ես | Խաղում եք |
| Խաղում է | Խաղում են |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42. Արտագրեցե՛ք միայն դերանունները և բայերը։

| | |
|---|---|
| Ես գնացի Թբիլիսի։ | Մենք գնացինք Թբիլիսի։ |
| Դու գնացիր Լենինգրադ։ | Դուք գնացիք Լենինգրադ։ |
| Նա գնաց Խարկով։ | Նրանք գնացին Խարկով։ |

## ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43. Հետևյալ ձևով խոնարհեցե՛ք պատմել, նկարել և շարադրել բայերը։

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| Խաղացի | Խաղացինք |
| Խաղացիր | Խաղացիք |
| Խաղաց | Խաղացին |

---

| | |
|---|---|
| Խաղում էի | Խաղում էինք |
| Խաղում էիր | Խաղում էիք |
| Խաղում էր | Խաղում էին |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44. Արտագրեցե՛ք միայն բայերը։

| | |
|---|---|
| Ես գնալու յեմ դպրոց։ | Մենք գնալու յենք դպրոց։ |
| Դու գնալու յես թատրոն։ | Դուք գնալու յեք թատրոն։ |
| Նա գնալու յե ակումբ։ | Նրանք գնալու յեն ակումբ։ |

## ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45. Հետևյալ ձևով խոնարհեցե՛ք նկարել, պատմել և սղոցել բայերը։

| Եզակի | Հոգնակի |
|---|---|
| Խաղալու յեմ | Խաղալու յենք |
| Խաղալու յես | Խաղալու յեք |
| Խաղալու յե | Խաղալու յեն |



> Ձայնավորով վերջացող բառերին հաջորդող միավանկ օժանդակ բայերից առաջ յ է գրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46. Հետևյալ հոդվածից ընտրեցե՛ք բայերը և գրեցե՛ք յերեք սյունակներում ըստ ժամանակների։

Սուրիկը սենյակը մաքրեց, նստեց ու սկսեց գիրք կարդալ։ Ներս մտավ Սուրիկի ընկերը՝ Սաշան, և ասաց. «Դրսում յերեխաները ձնագնդի յեն խաղում և չմուշկներով սղղում են»։ Նրանք էլ գնացին և մասնակցեցին խաղին։

Նրանք ասացին. «Վաղը նորից գալու յենք, նորից խաղալու և ուրախանալու յենք»։ Յերեխաները շատ ուրախացան, շարք կանգնեցին և վերադարձան դպրոց։

> Բայի փոփոխումն ըստ դեմքերի, թվերի և ժամանակների կոչվում է խոնարհում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47. Ջոկեցե՛ք բայերը և դարձրե՛ք ներկա ժամանակի։

### ՀԱՌԱՋԱՆՔ

Մըթնեց։ Ծերունին լուռ չարչարանքով
Մի քանի կոճղեր դըրեց կըրակին,
Նորից բարևեց իր յերկրի կարգով
Ու բարի մաղթեց ջահել ղոնաղին։

Ու նստոտեցինք իրար դեմ ու դեմ
Սաստկությամբ վառվող կրակի շուրջը,
Մեր աջև ձորն է թըշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում ձորերի շունչը։

(Հ. Թ.)

Օրինակ՝ մթնեց — մթնում է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48. Ջոկեցե՛ք բայերը և դարձրե՛ք անցյալ ժամանակի։

Գոռում են, գոռում Թմկա ձորերը,
Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման.
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում՝ են Քռի նման։

(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49. Ջոկեցե՛ք բայերը և դարձրե՛ք ապառնի ժամանակ։

Պտույտ է գալի չքնաղ տիրուհին,
Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, որ ուրախ լինեն,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն։

(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50. Հետևյալ հատվածից ջոկեցե՛ք բայերը՝ փոխելով նրանց թիվը և ժամանակը։

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեշից,
Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
Զմրան անվրդով քնի մշուշից։
Ահա Լալվարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար յերեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձյուներն էլ արդեն հալ ընկան,
Արտասվեց իսկույն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,
Ամեն մի թփից բլբուլ է խոսում։

(Վ. Միրաքյան)

Օրինակ՝ ծագում—ծագեցին, ծագելու յեն։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51. Ջոկեցե՛ք բայերը և փոխեցե՛ք նրանց դեմքն ու ժամանակը։

Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում՝ են Քռի նման.
Յերգում է աշուղն իր Շահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լսում է մատաղ Թմկա տիրուհին.
Յեվ վրդովում են իր միտքը թագուն
Դավաճան գործի ամոթը խորին
Յեվ արքայական փառքն ու մեծություն...

(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52. Ինքներդ կազմեցե՛ք յերեք նախադասություն ներկա ժամանակով, յերեք նախադասություն անցյալ ժամանակով, յերեք նախադասություն ապառնի ժամանակով։

Ձեր կազմած նախադասությունների մեջ գործածեցե՛ք հետևյալ բայերը՝ կտրել, կարել, տանել, վազել, գնալ, խաղալ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53. Հետևյալ ձևով խոնարհեցե՛ք սովորել, նկարել, պատմել, կարդալ բայերը։

| Ներկա | Անցյալ | Ապառնի |
|---|---|---|
| Յես գրում եմ | Յես գրեցի | Յես գրելու յեմ |
| Դու գրում ես | Դու գրեցիր | Դու գրելու յես |
| Նա գրում է | Նա գրեց | Նա գրելու յե |
| Մենք գրում ենք | Մենք գրեցինք | Մենք գրելու յենք |
| Դուք գրում եք | Դուք գրեցիք | Դուք գրելու յեք |
| Նրանք գրում են | Նրանք գրեցին | Նրանք գրելու յեն |

| Ներկա | Անցյալ | Ապառնի |
|---|---|---|
| | Յես գրում եյի | Յես պիտի գրեմ |
| | Դու գրում եյիր | Դու պիտի գրես |
| | Նա գրում եր | Նա պիտի գրի |
| | Մենք գրում եյինք | Մենք պիտի գրենք |
| | Դուք գրում եյիք | Դուք պիտի գրեք |
| | Նրանք գրում եյին | Նրանք պիտի գրեն |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54. Հետևյալ վոտանավորից ջոկեցեք բայերը և փոխեցեք նրանց թիվը։

Աշունն էլ յեկավ Գուգարք աշխարհում,
Սարին ու դաշտին այլ կյանք է յեռում.
Խուզելով գառան, վոչխարի բուրդը,
Քոչել է բինեն, թողնելով յուրդը.
Լեռներից զվարթ գիրացած հոտեր
Ձմեռվան համար իջել են դաշտեր։
Յուրդերը դատարկ սևին են տալիս,
Աղբյուր ու ծաղիկ վողբում են, լալիս.
Մենակ խաղում է, թռչկոտում պախրան,
Սարեր ու ձորեր մնացին նրան։
Արծիվն էլ տխուր նստած ժայռերին՝
Վորսեր է փնտռում իր սոված փորին։

(Վ. Միրաքյան)

## 7. ԲԱՅԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55. Ի՞նչ տարբերություն կա աջ ու ձախ սյունակներում գրվածների միջև։



Նրանք համապատասխանում են նկարների բովանդակությանը։





| Դրական | Ժխտական |
|---|---|
| Ձյունն արդեն հալվեց։ | Ձյունը դեռ չի հալվել։ |
| Խոտը կանաչում է ամեն տեղ։ | Խոտը դեռ չի կանաչել ամեն տեղ։ |
| Ծառերը ծաղկում են։ | Ծառերը չեն ծաղկել։ |
| Ծաղիկները բացվում են։ | Ծաղիկները չեն բացվել։ |
| Յերգում են թռչունները։ | Թռչունները չեն յերգում։ |
| Գարունն արդեն յեկել է։ | Գարունը դեռ չի յեկել։ |

Բայի ժխտական ձևը ցույց է տալիս, վոր գործողությունը հերքվում է, մերժվում է։

Բայը ժխտական ձևի դարձնելու համար ավելացվում է չ մասնիկը, վորը գրվում է բայի կամ օժանդակ բայի առաջից։

Օրինակ՝ կարդալ, չկարդալ. ուտել, չուտել. տեսա, չտեսա. ծաղկել են, չեն ծաղկել և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56. Հետևյալ ձևով խոնարհեցեք գրել և նվագել բայերը։

| Ն ե ր կ ա | |
|---|---|
| Դրական | Ժխտական |
| Կարդում եմ | Չեմ կարդում |
| Կարդում ես | Չես կարդում |
| Կարդում ե | Չի կարդում |
| Կարդում ենք | Չենք կարդում |
| Կարդում եք | Չեք կարդում |
| Կարդում են | Չեն կարդում |

| Ա ն ց յ ա լ | |
|---|---|
| Դրական | Ժխտական |
| Կարդացի | Չկարդացի |
| Կարդացիր | Չկարդացիր |
| Կարդաց | Չկարդաց |
| Կարդացինք | Չկարդացինք |
| Կարդացիք | Չկարդացիք |
| Կարդացին | Չկարդացին |

| Ա պ ա ռ ն ի | |
|---|---|
| Դրական | Ժխտական |
| Կարդալու յեմ | Չեմ կարդալու |
| Կարդալու յես | Չես կարդալու |
| Կարդալու յե | Չի կարդալու |
| Կարդալու յենք | Չենք կարդալու |
| Կարդալու յեք | Չեք կարդալու |
| Կարդալու յեն | Չեն կարդալու |



Բայերը ժխտական ձևով խոնարհելու ժամանակ օժանդակ բայը (եմ, ես, ե, ենք, եք, են, եյի, եյիր, եր, եյինք, եյիք, եյին) առաջ ե ընկնում և իր սկզբից ունենում ե չ ժխտական մասնիկը։

Յեզակի յերրորդ դեմքի ե օժանդակ բայը ժխտական ձևի խոնարհման ժամանակ փոխվում ե և դառնում չի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57. Արտագրեցեք հետևյալ հոդվածը՝ ամեն մի բայի առաջ դնելով չ ժխտական մասնիկը, և ասացեք՝ կհամապատասխանի՞ արդյոք պատմվածքի բովանդակությունը «Ամառ» վերնագրին։

## ԱՄԱՌ

Արևը խանձում ե, հունձը հասունանում ե, խոտը հնձվում ե։ Խոտհարքներում գերանդիները շաչում են։ Կոլտնտեսականների անասունները սարն են բարձրանում։ Լեռները կանաչում են, այգիներում խաղողը հասունանում ե։ Յերեխաները լողանում են գետերում ու լճերում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58. Հետևյալ հոդվածից և քառյակներից ջոկեցեք ժխտական բայերը։

Յերվանդն այսօր իր դասերը չեր սովորել, դրա համար դպրոց չգնաց։ Նա արդեն չեր ուզում գնալ, վորովհետև դասագրքեր չունի և չի ել ցանկանում գնել։ Նա չի ուզում սովորել և կանոնավոր չի հաճախում դպրոց։ Հարկավոր ե դաստիարակչական միջոցներ ձեռք առնել, վորպեսզի նա չխուսափի սովորելուց։

— Չելավ, եդ չելավ,
Վեր չի գցել դեռ,
Մոսին թող եկավ —
Խոզապարկուկ եր...

(Հ. Թ.)

---

Ինձ չես լսում,
Չես ափսոսում,
Ել չես ասում՝
Ինչ կըլնեմ յես...

(Հ. Թ.)

---

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59. Ինքներդ կազմեցեք հինգ նախադասություն ժխտական բայով։

## 8. ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՁԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60. Կարդացեք աջ ու ձախ սյունակներում գրվածը և ասացեք՝ ինչ տարբերություն կա նրանց միջև։





| | |
|---|---|
| 1. Պատրաստում ես քո դասերը։ | 1. Պատրաստիր քո դասերը։ |
| 2. Պատրաստում եք ձեր դասերը։ | 2. Պատրաստեցեք ձեր դասերը։ |
| 3. Գնում ես աշխատանքի։ | 3. Գնա աշխատանքի։ |
| 4. Գնում եք աշխատանքի։ | 4. Գնացեք աշխատանքի։ |
| 5. Կարդում ես գեղարվեստական գրքեր։ | 5. Կարդա գեղարվեստական գրքեր։ |
| 6. Կարդում եք գեղարվեստական գրքեր։ | 6. Կարդացեք գեղարվեստական գրքեր։ |

Բայի այն ձևը, որ ցույց է տալիս, թե խոսողն իր խոսակցին հրամայում, խնդրում կամ խորհուրդ է տալիս՝ մի բան անել կամ լինել, կոչվում է հրամայական։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 61. Հետևյալ ձևով խոնարհեցեք վազել, խաղալ, գնալ, խոսել բայերը։

| Դրական ձև | Հրամայական ձև |
|---|---|
| Յես կարդում եմ | . . . . . . . . . . |
| Դու կարդում ես | Դու կարդա |
| Նա կարդում է | . . . . . . . . . . |
| Մենք կարդում ենք | . . . . . . . . . . |
| Դուք կարդում եք | Դուք կարդացեք |
| Նրանք կարդում են | . . . . . . . . . . |

Բայի հրամայական ձևն ունի միայն երկրորդ դեմք՝ եզակի և հոգնակի թվերով։ Հրամայական ձևի վերջին ձայնավորի վրա շեշտ է դրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62. Հետևյալ պարբերությունները արտագրելիս ընտրեցեք բայերի հրամայական ձևերը և կազմեցեք ինքնուրույն նախադասություններ։

Դավիթն էլ անա սարի գագաթին
Կանգնած գոռում է վիշապի նման.
—Ով քնած եք՝ արթուն կացեք,
Ով արթուն եք՝ ելեք, կեցեք,
Ով կեցել եք՝ զենք կապեցեք,
Զենք եք կապել, ձի թամբեցեք,
Ձի յեք թամբել, ելեք, հեծեք,
Հետո չասեք, թե մենք քնած —
Դավիթ գող-գող ելավ, գնաց։

(Հ. Թ.)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 63. Հետևյալ ձևով խոնարհեցեք առաջարկել, ստանալ, բերել, աշխատել և կարդալ բայերը։

| Ներկա | | Անցյալ | |
|---|---|---|---|
| Դրական | Ժխտական | Դրական | Ժխտական |
| Գրում եմ | Չեմ գրում | Գրեցի | Չգրեցի |
| Գրում ես | Չես գրում | Գրեցիր | Չգրեցիր |
| Գրում է | Չի գրում | Գրեց | Չգրեց |
| Գրում ենք | Չենք գրում | Գրեցինք | Չգրեցինք |
| Գրում եք | Չեք գրում | Գրեցիք | Չգրեցիք |
| Գրում են | Չեն գրում | Գրեցին | Չգրեցին |
| — | — | — | — |
| Գրիր | Մի գրիր | Գրում էի | Չէի գրում |
| Գրեցեք | Մի գրեք | Գրում էիր | Չէիր գրում |
| | | Գրում էր | Չէր գրում |
| | | Գրում էինք | Չէինք գրում |
| | | Գրում էիք | Չէիք գրում |
| | | Գրում էին | Չէին գրում։ |



| Ապառնի | |
|---|---|
| Դրական | Ժխտական |
| Գրելու եմ | Չեմ գրելու |
| Գրելու ես | Չես գրելու |
| Գրելու է | Չի գրելու |
| Գրելու ենք | Չենք գրելու |
| Գրելու եք | Չեք գրելու |
| Գրելու են | Չեն գրելու |

## 9. ԲԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 64. Կարդացեք և ասացեք՝ ինչ տարբերություն կա գծի աջ և ձախ կողմում տրված նախադասությունների միջև։

| | |
|---|---|
| Գնա անտառ։ | Մի գնա անտառ։ |
| Խոսիր ու պարիր։ | Մի խոսիր ու մի պարիր։ |
| Խաղա ու զբոսնիր։ | Մի խաղա ու մի զբոսնիր։ |

Բայի հրամայական ձևի ժխտականը կազմվում է մի մասնիկով։

Բայի հրամայական ձևի շեշտը դրվում է մի՛ արգելականի վրա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 65. Կազմեցեք ծիծաղել, ցատկել, նստել, զոռզանալ, սպառնալ բայերի հրամայականները և հրամայական ժխտականները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 66. Արտագրեցեք և դրեք հրամայական-ների շեշտը համապատասխան տեղերում։

Առավոտը շուտ վեր կաց, հագնվիր, լվացվիր, նախաճաշիր և գնա դպրոց։ Դասի զանգը տալուն պես մտիր դասարան և նստիր տեղդ։ Ուշադրությամբ լսիր ուսուցչին և կատարիր նրա հանձնարարությունները։ Դասամիջոցներին մի մնա դասարանում, մի վազվզիր միջանցքում, մի խանգարիր ընկերներիդ խաղերին, ընդհակառակը, մաքուր օդի մեջ դու ինքդ կազմակերպիր կուլտուրական խաղեր։ Դասերից մի ուշանա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. Հետևյալ վոտանավորից ջոկեցեք բայերը և դարձրեք հոգնակի հրամայական։

Ստալինյան դու ողաչու, թռիր, սուրա դեպի վերև,
Ճախրիր օդում, խաղեր արա, վորպես բազե յեթերաթև,
Յեվ այնտեղից նայիր, դիտիր սահմանները ազատ յերկրի,
Վոր չլինի մեր դեմ դավե նենգ ու խարդախ լիրբ թշնամին։
Իսկ յերբ տեսար՝ փորձ են անում թևակոխել սահմանից ներս,
Խփիր, ջարդիր, շանթահարիր անկոչներին այն սևերես։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68. Հետևյալ վոտանավորից ջոկեցեք բայերը և դարձրեք յեզակի թիվ հրամայական։

Հե՜յ, ծլեցե՛ք ու ծաղկեցե՛ք,
Վառ բուրավետ ծաղիկնե՛ր,
Ձեր գույներով զարդարեցե՛ք
Հայրենիքս վոսկեհեր։
Յեվ դուք, գարնան ջրեր վարար,



Կարկաչեցե՛ք, հոսեցե՛ք,
Վեհ սարերից սահեցե՛ք վար,
Դաշտ ու այգի ջրեցե՛ք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69. Արտագրեցեք հետևյալ հոդվածը։ Հրամայականի վրա դրեք շեշտ։

Յեղիր հարվածային, պահպանիր պետական գույքը, հաճախիր ակումբ և կարդա գեղարվեստական գրքեր։ Ունեցիր քո որվա ռեժիմը և խիստ կերպով պահպանիր նրա կանոնները։ Ժամանակին քնիր և ժամանակին վեր կաց։ Ամեն առավոտ մասնակցիր լիցքային մարզանքներին։ Ակտիվ կերպով մասնակցիր հասարակական աշխատանքներին։ Ժամանակին կատարիր քո բոլոր պարտականությունները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70. Ինքներդ կազմեցեք 5 նախադասություն հրամայական և 5 նախադասություն արգելական ձևի բայերով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71. Հետևյալ վոտանավորից ջոկեցեք հրամայական ձևի բայերը և վորոշեցեք նրանց դեմքն ու թիվը։

Ե՜յ, հսկեցե՛ք, ինչ եք քնում,
Քաջ զինվորնե՛ր Թաթուլի.
Ո՞վ է, տեսեք, տանջվում մթնում,
Քուն չի աչքին մոտ գալի։
Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գնում ու գալի,
Հե՜յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր,
Պահապաննե՛ր Թաթուլի։

Վե՛ր կացեք, վե՛ր, հարբեցրել է
Իր հաղթական հյուրերին,

Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին։

Դմփ... դմփ... ցլեր... կոչնակ...
պահնակ...

Ձենք առեք շուտ... ձի հեծեք, ձի՜...
Ճռնչում են, դղրդում են
Դարպասները յերկաթի...

(Հ. Թ.)

Օրինակ՝ Հսկեցե՛ք — հոգնակի թիվ, յերկրորդ դեմք։

## 10. ԲԱՅԻ ԱՆՈՐՈՇ ՁԵՎԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72. Հետևյալ նախադասություններից արտագրեցեք այն բառերը, վորոնք պատասխանում են ինչ անել և ինչ լինել հարցերին։

(Ի՞նչ լինել) լինել մաքրասեր։

(Ի՞նչ լինել) դառնալ հարվածային։

Հաջորդ աշխատանքների համար (ինչ անել) պատրաստվել ժամանակին։

(Ի՞նչ անել) բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։

(Ի՞նչ անել) պահպանել կարդալու առողջապահական կանոնները։

Գրավոր աշխատանքները (ինչ անել) կատարել թարմ ժամանակ։

Յուրաքանչյուր ժամ աշխատելուց հետո 15 րոպե (ինչ անել) դադար տալ։

(Ի՞նչ անել) դառնալ օրինակելի աշակերտ։



Բայի այն ձևը, վորը պատասխանում է ինչ անել կամ ինչ լինել հարցերին, կոչվում է բայի անորոշ ձև։

Բայի անորոշ ձևն ունենում է ել կամ ալ վերջավորությունը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73. Արտագրեցեք հետևյալ նախադասությունների բայերը՝ անորոշ ձևի վերածելով։

| | |
|---|---|
| 1. Լսի՛ր ուսուցչին | 1. Լսել ուսուցչին |
| 2. Պատրաստի՛ր դասերդ | 2. . . . . . . . . . . . |
| 3. Մասնակցի՛ր աշխատանքներին | 3. . . . . . . . . . . . |
| 4. Դարձի՛ր հարվածային | 4. . . . . . . . . . . . |
| 5. Յենթարկվի՛ր կարգ ու կանոնին | 5. . . . . . . . . . . . |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74. Հետևյալ նախադասություններն արտագրելիս կետերի տեղը գրեցեք փակագծերում տրված հարցերին պատասխանող բայերն իրենց անորոշ ձևով։

1. Գրիշան ուշանում է դասից, չի կարելի . . . . . . (ինչ անել)։

2. Սուրիկը դասերը չի սովորում, պետք է . . . . . . (ինչ անել)։

3. Սեդան ձեռքերը միշտ թանաքոտում է, հարկավոր է . . . . . . (ինչ անել)։

4. Յերվանդը կարգապահ չէ, պետք է . . . . . . . . . . (ինչ լինել)։

5. Սաշան ժամանակին չի հագնվում, անհրաժեշտ է . . . . . . . . (ինչ անել)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75. Ինքներդ կազմեցեք 5 նախադասություն անորոշ ձևի բայերով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76. Հետևյալ բայերով կազմեցեք 7 նախադասություն՝ բայերը գործածելով անորոշ ձևով, և 7 նախադասություն՝ խոնարհած ձևով։

(Գրել, վազել, նստել, գնալ, խաղալ, լվացվել, հագնվել։)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77. Այս ոտանավորից ջոկեցեք բայերը և նրանց դիմաց նշանակեցեք դրական, ժխտական և անորոշ ձևերը։

Նրա հերը չի գալիս, ծերունի յե համառ.
Աշխարհը չի կործանվի մի ծերունու համար։
Բայց մենք ունենք իրավունք Ալեքսանին վանել,
Բախտը կապել պառավին, ապագան սպանել։
Յես բնավ չեմ կասկածում Ալեքսանի վրա։
Ինձ հայտնի յե մանրամասն պատմությունը նրա։
Նա կոլխոզի շարքերում մեզ հետ կը պայքարի։
Չի հեռանա, չի փախչի կիսաճանապարհից։
Նա յեկել է բանակից, նա մերվել է մերոնց.
Յեվ նա կարող է դառնալ առաջավոր հերոս։
Նա իր հոգին էլ կբերի մի ժամանակ հետո.
Քեռի Հովսան էլ կգա իմ խոր տեսակետով։

(Ն. Զարյան)

Օր՝. Չի գալիս — ժխտական ձև է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78. Արտագրեցեք հետևյալ ոտանավորը՝ բայերը ժխտականի վերածելով։

Յեվ դալար հովիտ, և՛ ժայռի կրծքեր
Արձագանքը տալով դարուն են հնչում.
Զմրան փարախից հովվական յերգեր
Զեփյուռի թևով սարերն են թռչում։
Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացվում է, ժպտում կոկոնից զվարթ,
Փարթամ գեղության վոգին Գուգարքի



Շնչում է գարնան բույրով անապարտ.
Ամպերն էլ իրար համբույրներ տալով,
Զվում են կայտառ, Լալվարը գրկում,
Առաջին անգամ խիստ վորոտալով
Գուգարք աշխարհին վողջույն են յերգում։

(Վ. Միրաքյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79. Հետևյալ ոտանավորից ընտրեցեք բայերը և նրանց առաջ գրեք անձնական դերանունները՝ համապատասխան թվով ու դեմքով։

Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում.
Վա՜հ, ես քաղքըցիք ինչ վաղ են քընում։
Հե՜յ կովատեր, հե՜յ գոմշատեր,
Յելե՛ք շուտով, բացե՛ք դըռներ,
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քսանն արել։
Շուտով յելե՛ք, յեկե՛ք տարե՛ք,
Ձեր ցեղն ու կով գոմերն արե՛ք։
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գլուխը դրեց մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։

(Հ. Թ.)

Օրինակ՝ նա յեկավ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80. Արտագրեցեք բայերը և դիմացը գրեցեք դեմքը, թիվը և ժամանակը։

Յեվ դինամիտն անտառում առավոտյան վորոտաց,
Սանթրոսի տան քարաշեն պատերն ահով դողացին։
Տանձենու տակ թափառող արջը փախավ չորեքթաթ։
«Էլ ահ չկա» մոլտաց փայտ հավաքող գյուղացին։

Ու վեր թռան մարմարի մանր—ալիքավոր կտորներ,
Ոգում թափով պարեցին ու շաղ յեկան չորս բոլոր։
Արձագանքը դղրդաց ու սլացավ սարնիվեր,
Անտառում էր հաղթական արշավանքը յերգելով։
Արձագանքը դղրդաց ու սլացավ սարեսար,
Հասավ խոժոռ ձորերին, քարափներին արևոտ,
Ու մոտակա գյուղերին յերգի նման խանդավառ
Հաղորդեց նոր մի կյանքի աղմկալից առավոտ։

(Ն. Զարյան)

## 11. ԹՎԱԿԱՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81. Կետերի տեղը գրեք քանակ ցույց տվող բառերը։



... յեզ ... վոչխար ... հավ ... գնդակ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82. Կետերի տեղը գրեք կարգ ցույց տվող բառերը և ասացեք քանիերորդն են ձեռքերում իրեր ունեցողները։



..... ..... ..... .....



Առարկաների թիվը կամ կարգը ցույց տվող բառերը կոչվում են թվական։ Թվականները լինում են քանակական և դասական։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83. Կարդացեք «Մեր դպրոցը» հոդվածը և ասացեք, թե թվականներն առարկաների ինչն են ցույց տալիս։

### ՄԵՐ ԴՊՐՈՑԸ

Մեր դպրոցն ունի յոթ դասարան։

Առաջին դասարանում կա 30 աշակերտ, յերկրորդ դասարանում՝ 35 աշակերտ, յերրորդ դասարանում՝ 38 աշակերտ, չորրորդ դասարանում՝ 25 աշակերտ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ դասարաններում կա 30—ական աշակերտ։ Ընդամենը ունենք 218 աշակերտ, վորոնցից 118 աղջիկներ են, 100 տղաներ։

Քանակական թվականներն են՝ մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, քսան, հարյուր, հազար և այլն։

Քանակական թվականները պատասխանում են քանի՞, վորքա՞ն և ինչքա՞ն հարցերին։

Դասական թվականներն են՝ առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ, քսաներորդ, հարյուրերորդ, հազարերորդ և այլն։

Դասական թվականները պատասխանում են վո՞րերորդ կամ քանի՞երորդ հարցերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84. Արտագրեցեք՝ կետերի տեղ դնելով համապատասխան թվականներ։

Մեր դպրոցն ունի .... դասարան։

.... դասարանում կա .... աշակերտ։ .... դասարա-

նում կա .... աշակերտ։ .... դասարանում կա ..... աշակերտ և այսպես մինչև վերջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85. Արտագրելիս տրված քանակական թվականների դիմաց գրեցեք նրանց դասական թվականները, ընդգծելով այն մասնիկները, որ ավելանում են քանակական թվականը դասականի վերածելու դեպքում։

| Քանակակ. | Դասական | Քանակակ. | Դասական |
|---|---|---|---|
| Մեկ | Առաջին | Տասնմեկ | Տասնմեկերորդ |
| Երկու | Երկրորդ | Տասներկու | Տասներկուերորդ |
| Երեք | . . . . | Տասներեք | Տասնչորսերորդ |
| Չորս | . . . . | Տասնչորս | . . . . . . . |
| Հինգ | . . . . | Տասնհինգ | . . . . . . . |
| Վեց | . . . . | Տասնվեց | . . . . . . . |
| Յոթ | . . . . | Տասնյոթ | . . . . . . . |
| Ութ | . . . . | Տասնութ | . . . . . . . |
| Ինն | . . . . | Տասնինն | . . . . . . . |
| Տաս | . . . . | Քսան | . . . . . . . |

| Քանակական | Դասական |
|---|---|
| Երեսուն | Երեսուներորդ |
| Քառասուն | . . . . . . . . . . |
| Հիսուն | . . . . . . . . . . |
| Վաթսուն | . . . . . . . . . . |
| Յոթանասուն | . . . . . . . . . . |
| Ութսուն | . . . . . . . . . . |
| Իննսուն | . . . . . . . . . . |
| Հարյուր | . . . . . . . . . . |
| Հազար | . . . . . . . . . . |
| Միլիոն | . . . . . . . . . . |



Դասական թվականները կազմվում են քանակական թվականներից՝ ավելացնելով **որդ** կամ **երորդ** մասնիկները։

**Որդ** ավելանում է միայն յերկու, յերեք և չորս քանակական թվականների վերջում (յերկրորդ, յերրորդ, չորրորդ), իսկ 5-ից սկսած մինչև միլիոն, միլիարդ և այլն քանակական թվականների վերջում ավելանում է **երորդ** մասնիկը (հինգերորդ, հազարերորդ, միլիարդերորդ և այլն)։

Բացառություն է կազմում միայն **առաջին** բառը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86. Արտագրեցեք հետևյալ հարցերի լրիվ պատասխանները՝ դնելով թվականները։

Տարին քանի՞ ամիս ունի։ Հունվարը քանի՞ օր ունի։ Օրը քանի՞ ժամ ունի։ Ժամը քանի՞ րոպե ունի։ Րոպեն քանի՞ վայրկյան ունի։

Քանի՞ եջ կա այս գրքում։ Քանի՞ տառ կա այս եջում։ Քանի՞ աշակերտ կա մեր դասարանում։ Քանի՞ աշակերտ կա մեր ամբողջ դպրոցում։

Օր.՝ Տարին ունի տասներկու ամիս։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87. Արտագրելիս յուրաքանչյուր թվականից առաջ փակագծերում գրեցեք համապատասխան հարցերը։

Տարին ունի տասներկու ամիս, ամիսն ունի հինգ վեցորյակ։ Հուլիսը յոթերորդ ամիսն է։ Նոյեմբերը տասնմեկերորդ ամիսն է։ Մայիսը հինգերորդ ամիսն է։ Մարտը յերրորդ ամիսն է։ Փետրվարը յերկրորդ ամիսն է։ Տարվա մեջ մենք սովորում ենք տասն ամիս։ Տարին ունի 365 օր։ Նահանջ տարին ունի 366 օր։ Յուրաքանչյուր 4-րդ տարին նահանջ տարի յէ։ Յես 12 տարեկան եմ, իմ յեղբայրը 16 տարեկան է։

Օրինակ՝ Տարին ունի (քանի՞ ամիս) տասներկու ամիս։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88. Հետևյալ հոդվածն արտագրելիս թվականները գրեցեք տառերով։

## ՄՈՍԿՎԱ-ՎՈԼԳԱ ՋՐԱՆՑՔԸ

Մոսկվա-Վոլգա ջրանցքը կառուցելիս փորել և տեղափոխել են այնտեղից 600 000 000 խոր. մետր հող։ Յեթե այդ հողը տեղափոխվեր յերկաթուղով, հարկավոր կլիներ 20 000 000 ապրանքատար վագոն։ Ջրանցքի կառուցումների վրա ծախսված է 240 000 տոնն մետաղ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89. Հետևյալ ձևով գրեցեք, թե ձեր դըպրոցի յուրաքանչյուր դասարանում քանի՞ աշակերտ կա։

Մեր դպրոցն ունի հինգ դասարան

| Լրիվ բառերով | Արաբական թվանշաններով |
|---|---|
| Առաջին դասարանն ունի 30 աշակ. | 1-ին դաս. 30 աշ. |
| Յերկրորդ դաս. ունի 35 աշ. | 2-րդ դաս. 35 աշ. |
| Յերրորդ դաս. ունի 40 աշ. | 3-րդ դաս. 40 աշ. |
| Չորրորդ դաս. ունի 40 աշ. | 4-րդ դաս. 40 աշ. |
| Հինգերորդ դաս. ունի 35 աշ. | 5-րդ դաս. 35 աշ. |

| Հռոմեական թվանշաններով | Հայկական տառերով |
|---|---|
| I դաս. ունի 30 աշ. | Ա դաս. ունի 30 աշ. |
| II դաս. ունի 35 աշ. | Բ » ունի 35 աշ. |
| III դաս. ունի 40 աշ. | Գ » ունի 40 աշ. |
| IV դաս. ունի 40 աշ. | Դ » ունի 40 աշ. |
| V դաս. ունի 35 աշ. | Ե » ունի 35 աշ. |



Դասական թվականները կարող են արտահայտվել ամբողջական բառերով. օրինակ՝ առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ և այլն։

Արաբական թվանշաններով—1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և այլն։

Հռոմեական թվանշաններով—I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X և այլն։

Այբբենական տառերով—ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90. Հետևյալ հարցերին տվեք գրավոր պատասխան։ Թվանշանները գրեցեք տառերով։

Յե՞րբ է ծնվել ընկեր Լենինը (1870 թ. ապրիլի 22-ին)։ Յե՞րբ մեռավ ընկեր Լենինը (1924 թ. հունվարի 21-ին)։ Յե՞րբ տեղի ունեցավ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը (1917 թ. նոյեմբերի 7-ին)։ Յե՞րբ հիմնադրվեց Կոմունիստական 3-րդ Ինտերնացիոնալը (1919 թ. մարտի 4-ին)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91. Հետևյալ հոդվածն արտագրելիս թվանշանները գրեցեք բառերով, իսկ տարեթվերը՝ թվանշաններով։

Խորհրդային Միության տարրական դպրոցներում սովորողների թիվը, հազար ինը հարյուր քսանութ թվի 10 միլիոնից, հազար ինը հարյուր յերեսուներկու թվին հասավ 19 000 000-ի։ Միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը 1 600 000-ից հասավ 4 256 000-ի։ Տեխնիկումներում և բանֆակներում սովորողների թիվը 264 000-ից հասավ 1 437 000-ի։ Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը 166 000-ից հասավ 500 000-ի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92. ա) Արտագրեցեք թվական անունները բառերով, բ) գրեցեք նույն թվականների դասականը։

Քարտուղարն արագորեն հանեց իր մաշված-ջարդված պորտմոնեն, բաց արեց, միջի փողը—սև ու սպիտակ դրամներ—թափեց գրասեղանի վրա և սկսեց համրել, դրամները մեկ-մեկ քաշելով մի կողմը—10, 11, 15, 20, 25, 29, 35, 37, 50, 52, 55, 58, 60, 62 կոպեկ։

(Նար-Դոս, «Նեղ օրերից մեկը»)

Օրինակ՝

| Քանակական | Դասական |
|---|---|
| քսանհինգ | քսանհինգերորդ |

## 12. ՄԱԿԲԱՅ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93. Համապատասխան կետերի տեղը բանավոր կերպով դրեք քիչ հետո, արդեն, հիմա բառերը։

Ուղևորների կայարանի կայարանապետը հեռախոսով հայտնում է Երևանի կայարանապետին։



Գնացքը ..... մեկնել է։ .... կես ճանապարհին կլինի։ .... այստեղ կլինի։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94. Արտագրեցեք աջ սյունակում ավելացրած բառերը և ասացեք՝ ինչ են ցույց տալիս։

| | |
|---|---|
| 1. Կոլտնտեսականները (յերբ) են սկսել գարնանացանը։ | 1. Կոլտնտեսականները վաղուց են սկսել գարնանացանը։ |
| 2. Ծառերը (յերբ) են սկսել կանաչել։ | 2. Ծառերը դեռ նոր են սկսել կանաչել։ |
| 3. Թռչունները (յերբ) են վերադառնում։ | 3. Թռչուններն արդեն վերադարձել են։ |

Այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե յերբ է կատարվում գործողությունը, կոչվում են ժամանակ ցույց տվող մակբայներ և պատասխանում են յերբ հարցին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95. Համապատասխան ձևով նկարների տակ կետերի տեղ բանավոր կերպով դրեք սարնիվեր, դեմառդեմ, տեղնուտեղը բառերը։



Պիոներները բարձրանում են .... Պիոներները կանգնած են .... Չարագործը բռնվեց ....

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96. Արտագրեցեք աջ սյունակում ավելացրած բառերը և ասացեք՝ ինչ են ցույց տալիս։

| | |
|---|---|
| 1. (Որտե՞ղ է) անձրև տեղում։ | 1. Ամենուրեք անձրև է տեղում։ |
| 2. Հրդեհը (որտեղի՞ց) տարածվեց։ | 2. Հրդեհը ներքուստ տարածվեց. |
| 3. (Որտեղից) ոչինչ չի երևում։ | 3. Արտաքուստ ոչինչ չի երևում։ |

Այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ուր կամ որտեղ է կատարվում գործողությունը, կոչվում են տեղ ցույց տվող մակբայներ և պատասխանում են ուր, որտե՞ղ հարցերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97. Նկարներին համապատասխան կետերի տեղը բանավոր կերպով դրեք դանդաղ և արագ բառերը։



Ձիավորը գնում է .....



Ձիավորը գնում է .....

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98. Արտագրեցեք աջ սյունակում ավելացրած բառերը և ասացեք՝ ինչ են ցույց տալիս։



| | |
|---|---|
| 1. Դաշտերը (ինչպե՞ս) կանաչում են։ | 1. Դաշտերը հետզհետե կանաչում են։ |
| 2. Դարբինը (ինչպե՞ս) հարվածում է։ | 2. Դարբինը ուժգին է հարվածում։ |
| 3. Ուղտը (ինչպե՞ս) շարժվում է։ | 3. Ուղտը կամաց-կամաց է շարժվում։ |

Այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է կատարվում գործողությունը, կոչվում են ձև ցույց տվող մակբայներ և պատասխանում են ինչպե՞ս հարցին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99. Արտագրել աջ սյունակում ավելացրած բառերը և ասել՝ ինչ են ցույց տալիս։

| | |
|---|---|
| 1 (Ինչքա՞ն) խոսված է այդ մասին։ | 1. Բազմիցս խոսված է այդ մասին։ |
| 2. (Ինչքան) ուշացար։ | 2. Փոքր ինչ ուշացար։ |
| 3. (Որքա՞ն) հոգնած ես։ | 3. Շատ հոգնած ես։ |
| 4 (Ինչքա՞ն է) պահանջում։ | 4. Ավելի յե պահանջում։ |

Այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե գործողությունը որքա՞ն, ինչքա՞ն է տևում, կոչվում են քանակ ցույց տվող մակբայներ և պատասխանում են ինչքա՞ն, որքա՞ն հարցերին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100. Հետևյալ նախադասությունների սխեմաները կազմեցեք և ասացեք՝ լրացումները ստորոգյալին են պատկանում, թե՞ ենթակային։

1. Սուրիկը հանդարտ խոսում էր։
2. Աշակերտները հիմա վերադառնում են։
3. Նրանք կանգնած են դեմառդեմ։
4. Գործունյա մարդը չափազանց սակավախոս է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101. Հետևյալ հոդվածից ջոկեցեք և արտագրեցեք մակբայներն այն բայերի հետ, վորոնց վերաբերում են այդ մակբայները։

## ՁԲՈՍԱՆՔ

Առաջուց մենք պայմանավորվել եյինք զբոսանքի գնալու։ Արդեն մենք ճանապարհորդում եյինք։ Մեր ճանապարհին դեմհանդիման գտնվում եր անտառը։ Սարնիվար հոսում եր գետակը։ Ամենուրեք կոլտնտեսականներն եյին աշխատում։ Անմիջապես մենք մոտեցանք գետակին և իսկույն մեր շորերը հանելով՝ մտանք ջուրը՝ լողանալու։ Շատ անգամ ենք մենք լողացել գետում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102. Հետևյալ մակբայները դասավորեցեք չորս սյունակներում ըստ իրենց համապատասխան հարցերի։

Դեմառդեմ, ներքուստ, դեռ, ավելի, բոլորովին, տարեցտարի, ուժգին, դարձյալ, հազիվհազ, կրկին, նորից, հազիվ, լիովին, դեմհանդիման, վերջիվերջո, չափազանց, մերթընդմերթ, հարկավ, անպատճառ, այնուհետև, պատնիվեր, քանիցս, այսուհետև, ամենուրեք, քիչ-քիչ, յերբեք, փոքրինչ, վաղուց, լայնորեն։

Օրինակ՝

| Ո՞ւր, վորտեղ | Ինչպես | Յերբ | Վորքան, ինչքան |
|---|---|---|---|
| Դեմառդեմ | Ուժգին | Հիմա | Քանիցս |
| . . . . . . | . . . . . | . . . . . | . . . . . . . |
| . . . . . . | . . . . . | . . . . . | . . . . . . . |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103. Հետևյալ մակբայները և վորպես մակբայ գործածվող բառերը դասավորեցեք յերկու սյունակներում այնպես, վոր հականիշներ ստացվեն։



Հետև, ներքուստ, վերև, միասին, ներս, մոտ, առանձին, ընկերաբար, առաջ, արտաքուստ, թշնամաբար, դուրս, հեռու, ներքև։

Օրինակ՝ առաջ, հետև։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104. Հետևյալ մակբայներով կազմեցեք ինքնուրույն նախադասություններ։

Տեղ ցույց տվող.—*Տեղնուտեղը, դեմառդեմ, սարնիվեր, ներքև, վերև։*

Ժամանակ ցույց տվող.—*Հիմա, արդեն, որեցոր, դեռ, վաղուց, այժմ, յերբեմն։*

Քանակ ցույց տվող.—*Մեկիկ-մեկիկ, քիչ-քիչ, շատշատ, չափազանց, ավելի։*

Ձեվ ցույց տվող.—*Ուժգին, դարձյալ, հետզհետե, հազիվ, կամաց-կամաց, իսկույն, թերևս, անպատճառ։*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105. Արտագրեցեք և կետերի տեղը մակբայներ դրեք։

. . . գնում եմ դպրոց։ Պիոներները բարձրանում են . . . ։ Մեր դպրոցի . . . կանգնած է օպերայի շենքը։ . . . զբոսանքի չեմ գնացել։ . . . հուզված է խոսում նա։ . . . մենք անցանք լեռնանցքով։ . . . փայլեց կարմիր դրոշակը հյուսիսային բևեռում։

(հիմա, վաղուց, դեմառդեմ, սարնիվեր, չափազանց, մեկիկ-մեկիկ, դարձյալ)։

## ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106. Հետևյալ բառերով կազմեցեք նախադասություններ և ասացեք, թե այդ բառերը նախադասության մեջ ինչ են ցույց տալիս։

Հերոսաբար, ընկերաբար, նախապես, մեծապես, բարեկամաբար, հարվածայնորեն, հավասարապես, կոմունիս-

տորեն, ցեղբայրաբար, ստախանովականորեն, գլխովին, քաջաբար, ամբողջովին, լիովին։

> Բար, պես, որեն, ովին ածանցները ավելանալով բառերի վերջից՝ այդ բառերը դարձնում են գործողության ձևը ցույց տվող մակբայներ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107. Հետևյալ բառերը համապատասխան վերջածանցներով դարձրեք մակբայներ և կազմեցեք նախադասություններ։

Ցիգիկա. ամբողջ, նախ, վախկոտ, թշնամի, գազան, վստահ, մեքենա, լայն, բոլոր, լի, անասուն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108. Հետևյալ հոդվածից ջոկեցեք բոլոր մակբայները և դասավորեցեք ըստ տեսակների։

## ԻՆՉՈՒ ՄԵԶ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑԻՆ

Ամբողջ գիշերը հորդ անձրև էր տեղում։ Ամենուրեք փոքրիկ առվակներ էին գոյացել և հոսում էին լեռնիվար։ Վարարած գետը ժամանակ առժամանակ սպառնում էր քանդել մեր ջրաղացի ամբարտակը։ Գիշերվա կեսն էր, մեր բրիգադիրը՝ ընկ. Թևոսը մեզ ձայն տվեց։ Փոքր ինչ հետո մեկիկ-մեկիկ հավաքվեցին մեր բրիգադի բոլոր անդամները։ Մեր կոլտնտեսության նախագահը՝ ընկ. Սարգիսը կարգադրեց, վոր անմիջապես վերցնենք բահերն ու քլունգները և գնանք գետի հունը լայնացնելու։ Մեր բրիգադը հերոսաբար էր կռվում գետի կատաղի ալիքների դեմ։ Մենք ամբողջովին թաղվել էինք ջրի մեջ։ Գետը հետզհետե ավելի յեր վարարում և արդեն ամբողջովին ծածկել էր ամբարտակը։ Թևոսը չափազանց վոգևորված՝ մեզ միշտ խրախուսում էր։ Մենք աշխատում էինք և աստիճանաբար լայնացնում էինք գետի հունը։ Աշխատում



էինք մեծ վոգևորությամբ և դեռ լույսը չբացված, այդ ահեղ գոտեմարտի մեջ, մենք արդեն հաղթանակը տարանք։ Գետը լիովին սանձահարված, հլու ու հնազանդ հոսում էր իր հունով, իսկ ամբարտակը կանգնած էր հպարտ, վորպես աշխատանքի հաղթանակի կոթող։

Մեր բրիգադն որվա հերոսն էր։ Բոլորը մեծապես գոհ էին մեր աշխատանքից, և մենք նորից պարգևատրվեցինք։

## 13. ԿԱՊ

Ես գնում եմ դեպի քաղաք




Նա գրում է առանց սխալների




Գործարանները պայքարում են վորակի համար




Մենք գնում էինք ընկերների հետ



Կապ են կոչվում այն բառերը, որոնք գործողության և նրա լրացումի հարաբերությունն են արտահայտում:

Կապերը կարող են դրվել բայի լրացումից թե առաջ, թե հետո:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109. Արտագրելիս կապերից հետո կետերի տեղը դրեք փակագծերում տրված լրացումները պահանջված հոլովով, իսկ կապերն ընդգծեցեք:

Այդ գործը չեմ կարող կատարել առանց . . . (ընկերներ) օգնության: Բոլորը պիտի մեկնեն Բագու, բացի . . . (դու): Աշխատելու ենք այսպես մինչև . . . (հունվար): Ես քեզ ճանաչում եմ իբրև . . . (ընկեր): Մեր լեռնագնացները գնում են դեպի . . . (Արագած):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110. Արտագրեցեք և կապերից առաջ կետերի տեղը դրեք փակագծերում տրված լրացումները՝ պահանջված հոլովով:

Խոսեցինք ձեր (թերություններ) . . . մասին: Ամեն (աշխատանք) . . . համար գործիքներ են հարկավոր: Ձեր (ջանքեր) . . . շնորհիվ շուտ վերջացրի գործը: Մեր (պայմանագիր) . . . համաձայն այսօր ավարտեցինք շենքի կառուցումը: Ես (Սուրիկ) . . . հետ գնացի դպրոց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111. Արտագրեցեք՝ կետերի տեղը դնելով բաց թողած կապերը:

Ուսանողության . . . ճաշ պատրաստեցի: Ամառային շոգերը տևեցին . . . հոկտեմբեր: Մեր դիրեկտորի աշխատանքների . . . ուսումնական տարին լավ վերջացրինք: Մարդիկ չեն կարող ապրել . . . բնակարանի: Մենք հաղթանակից . . . հաղթանակ ենք գնում: Ձեր աշխատանքների . . . շատ է խոսվել: Բոլորը պիտի գան . . . մեկից:



Հայտնվում է . . . գիտություն բոլորին: Հաշիվները փակվում են . . . 15-ն մայիսի:

(Առանց, բացի, դեպի, մինչև, մասին, համար, հետ, շնորհիվ, ի, առ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112. Այս հոդվածից արտագրեցեք կապերը:

## ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՌԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Գիտնական Շմիդտը հերոս օդաչու Վոդոպյանովի և այլ հետախույզների հետ թռավ դեպի Հյուսիսային Բևեռ: Առանց որևէ վտանգի նրանք վայրէջք կատարեցին Հյուսիսային Բևեռի սառույցների վրա: Մինչև այսօր ոչ ոքի չէր հաջողվել այդպիսի խիզախ գործ կատարել:

Հյուսիսային Բևեռի վրա այժմ հպարտ ծածանվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության դրոշակը: Աշխարհի բոլոր թերթերը հաղորդագրություններ տպագրեցին խորհրդային խիզախ հետախույզների մեծ հաղթանակի մասին:

Գիտնական Շմիդտի և նրա հերոս ընկերների այդ խոշոր հաղթանակը մեր սոցիալիստական հայրենիքի համար մեծ պարծանք է:

(«Խ. Հ.»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113. Արտագրեցեք և խմբավորեցեք կապերն ըստ տեսակների:

Յեվ նա թռչկոտելով վազեց փողոցով:

Քաան ապանված եյին ընկած սալահատակի վրա: Ծուխը մշուշի պես բռնել էր փողոցը: Կռվողները դժվարությամբ եյին ջոկում իրար, թեև փողոցն առանձնապես յերկար չեր: Այդ ձեռնտու յեր Գավրոշի համար: Նա, իր կարճ հասակի շնորհիվ, ծխի ծածկույթի տակ բավականին հեռու գնաց փողոցի մեջ ու կարողացավ վերցնել

չոթը թե ուժ փամփուշտակալ, առանց իրեն վտանգելու։ Նա մեկ սողում եր փորի վրա, մեկ չորեքթաթ եր տալիս, կողովը ատամներով բռնած գլորվում եր, անցնում եր մի դիակից մյուսը։ Բարրիկադի ընկերները, վոր ամբողջ ժամանակ հետևում եյին նրան, վախենում եյին ձայն տալուց, վոր թշնամու ուշադրությունը չդարձնեն նրա վրա։

(Վ. Հյուգո «Բարրիկադների վրա»)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114. Արտագրելով բացեք փակագծերը և գոյականը գործածեցեք պահանջված հոլովով, ընդգծեցեք կապերը.

1. Առանց (գիրք) դաս չեն սովորում։ 2. Այդ միջոցին կարելի յեր նրա (դեմք) վրա նշմարել լրջություն (Տ.)։ 3. Այստեղ ապրանքը դարսված եր (հատակ) վրա, (պատեր) տակ . . . (Տ.)։ 4. Այս ասելով նա անմիջապես դիմեց դեպի (դռներ) (Տ.)։ 5. Արշալույսին, հիվանդի (աչքեր) յերևում եր [illegible] հոգի . . . (Տ.)։ 6. Մենք մինչև (կայարան) ուղեկցեցինք խոալացիներին (Տ.)։ 7. Յեթե գոմի (դուռ) մոտ կապած ուլը չլիներ, մենք կըկարծեյինք, թե այս (տուն) մեջ կենդանի շունչ չկա (Մուր.)։ 8. (Մելիք) վրա նրանք մի քանի անգամ պրոտոկոլ եյին սարքում, բայց ամեն անգամ այդ «խունդ» թղթերը մնում եյին առանց (հետևանք) (Փափ.)։ 9. Պետք է փախչել, բայց աղան (ձյութ) պես կպել է հրացանից (Փափ.)։ 10. Ցերեկ ուզում է հանդիմանել վորևե (բան) համար (Զորյան)։



## 14. ՇԱՂԿԱՊ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115. Ձախ սյունակի ընդգծված բառերը գրեք աջ սյունակի սարքակների տեղը և ասացեք՝ վոր բառերն են կապվում միմյանց հետ։

1. Սուրիկը յեվ Գրիշան գրում են։

2. Արամը յերգում է յեվ պարում է։

3. Կարմիր ու հոտավետ վարդերը բացվեցին

4. Հրաչիկը գնում է, իսկ Զավենը գալիս է։

5. Կիմիկը կարդում է, բայց չի հասկանում։



Բարդ նախադասության բաղմակի անդամները կամ բարդ նախադասության առանձին նախադասությունները իրար հետ կապող բառերը կոչվում են շաղկապ։ Ամենագործածական շաղկապներն են յեվ, ու, թե, բայց, իսկ, սակայն, այսինքն, ուրեմն, վոր, յեթե, վորպեսզի, վորովհետեվ բառերը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116. Հետևյալ հոդվածից ջնջեցեք և, ու, սակայն, ուրեմն, վորովհետև, իսկ շաղկապները և ասացեք՝ ինչ՞ հարաբերություն են արտահայտում՝ առարկաների՞, թե՞ նրանց գործողությունների։

Ուսուցիչները միշտ գովում են Սուրիկին և Գրիշային։ Նրանք որվա մեծ մասը կարդում են ու գրում են։ Աշակերտները նրանց սիրում են և շատերն էլ աշխատում են հասնել նրանց։ Մենք միջակից բարձր գնահատականներ ունենք, սակայն այդ չի բավարարում մեր պահանջները։ Մեր պայմանն է՝ տարին փակել առանց թույլերի, ուրեմն պետք է աշխատենք իրագործել այդ։ Պետք է իրագործել ծրագիրը, իսկ մենք բավական հետ ենք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117. Հետևյալ նախադասություններն արտահայտեցեք սխեմայով։

Վազգենն ու Նորյունը գնացին դպրոց։ Քնարիկը, Ցոլիկը և Վարդուշը սովորում էին։ Սեդան գնաց և վերադարձավ։ Եմման յերգում է, իսկ Ամալիան պարում է։ Վազգենը գնում է աշխատանքի, բայց նա ակտիվ չի մասնակցում գործին։ Յես գիրք էի կարդում, սակայն ինձ խանգարում էին։ Աշխատում եմ, վորպեսզի գործս շուտ վերջացնեմ։ Յեթե ուզում եք, յես կմասնակցեմ ձեր աշխատանքներին։ Այսոր դպրոց չգնացի, վորովհետև հիվանդ էի։



Որինակ՝ Վազգենը և Նորյունը խաղում էին։




Սեդան գնաց և նա վերադարձավ։




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 118. Արտագրեցեք հետևյալ նախադասությունները՝ կետերի տեղը դնելով համապատասխան շաղկապները։

Սուրիկը ... Գրիշան գերազանցիկներ են։ Յերբ ազդանշան տրվեց, պիոներները հավաքվեցին ... հոկտեմբերիկները գնացին դպրոց։ Առավոտյան շուտ հագնվեք և պատրաստվեցեք, ... չուշանաք դասերից։ Ընկերս այսոր դպրոց չեկավ, ... հիվանդ եր։ Մենք շուտով վերջացնելու յենք մեր աշխատանքները, ... թատրոն գնանք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 119. Հետևյալ հոդվածից ընտրեցեք շաղկապները և կազմեցեք նախադասություններ։

## Ա Ք Վ Ա

Աքվա. այսպես եր փոքրիկ կաթիլի անունը։ Թեպետ փոքրիկ ու աննշան եր նա, բայց շատ հետաքրքրական բաներ եր տեսել իր կյանքում։

Յեվ արևն իր ջերմ շողերն ուղարկեց, Աքվային տաքացրեց, թեթև գոլորշի դարձրեց, ու Աքվան բարձրացավ վեր, վեր։ Նա հետզհետե սառչում եր, սառչում և վերջա-

պես միացավ այն ամպիկին, վորին նայում եր ներքևից, յերբ դեռ ինքը գտնվում եր ծովում:

Յեվ տեսնում ե Օքվան, վոր սպիտակին են տալիս տնակները, կանաչին՝ այգիներն ու մարգագետինները, իսկ դրանց միջով ժապավենաձև ձգվում ու անցնում են ճանապարհները:

## 15. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120. Արտագրեցեք շղագրով տպված բառերը և ասացեք՝ ինչ են արտահայտում նրանք նախադասության մեջ:

Ծո՛, ձենով հնա՛ն, տո՛, մահի տարած,
Ես խենթը բերիր, արիր գառնարած....

---

Վա՜հ, էս մարդիկը ինչ վաղ են քնում.

---

Հե՜յ, ուլատեր, հե՜յ, գառնատեր,
Յելեք, շուտով բացեք դռներ:

---

Վա՜յ, վա՜յ, հորեղբայր, ի՞նչ անեմ յես քեզ:

---

Ա՜յ խենթ խելագար, վաղկին պահել եմ Մելիքի համար:

---

Ինձ թող, ամա՜ն, մի սպանիր,

---

Կուզես, հրե՛ն, գնա հանիր:

---

Հառա՜յ կանչելով փախավ տուն ընկավ,
— Վա՜յ, փախեք, յեկավ, հայ՜, հառա՜յ, յեկավ:

---

Հե՜յ, հե՜յ, Դավիթ, վորտեղ ես դու:

---



Հա՜յ, հա՜յ,— ասավ,— հորեղբայրս ե:

---

Ափսո՜ս, հազար ափսո՜ս, հրեղեն մեր ձին,
Ա՜խ, հրեղեն մեր ձին:

---

Ո՜Փ, ել հանգիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից:

---

Հե՜յ, ուր ես, Դավիթ, դուրս արի մեյդան:

Այն բառերը, վորոնք խոսողի զգացմունքը, ցանկությունը և կոչն են արտահայտում, կոչվում են ձայնարկություն:

Ձայնարկությունները արտասանվում են յերկարացնելով կամ շեշտելով: Նրանց վրա դրվում են յերկարացման (բացականչական) նշան կամ շեշտ (՜),(՛):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121. Հետևյալ հատվածից ջոկեցեք ձայնարկությունները:

Թեոսը մաճի վրա ընկած գոմեշները քշողների «հոռովելին» եր ձայնակցում: Թեև տեսավ Ավագին, բայց չլսեց նրա ասածը:

— Բո՜, քեզ հետ չեմ... եդ ինչ բանի յես, է՜ է՜...

— Հը՜, հը՜... կանգնեցրեց գութանը Թեոսը և դարձավ դեպի հետ:

— Ցո՜... արեց Ավագը,— տո՛, վո՞նց թե...

— Տո՛, փիճ ... գոչեց տաքացած Ավագը,— ո՛վ քեզ կանչեց, վոր անես, ուր եյիր հողի վրեն քրտինք թափում:

— Եդ ա, վոր չես իմացել, է՜... հողը վոր կա, աշխատավորինն ա, վրեն քրտինք թափողինը:

(Փափ.)

Համեմատաբար շատ գործածվող ձայնարկություններն են՝ ո՜խ, ո՜ֆ, ա՜խ, վա՜խ, վա՜յ, վա՜հ, ա՛յ, է՜յ, հե՛յ, դե՛, դե՛հ, ո՜հ, ո՜, ա՜հ, ափսո՜ս, հա՜յ-հա՜յ, վա՜յ-վա՜յ, վո՜ւյ-վո՜ւյ:

Ձայնարկությունները նախադասության անդամ չեն լինում և ստորակետով անջատվում են նախադասության անդամներից։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 122. Հետևյալ նախադասությունների ձայնարկությունների կետադրության նշաններն ինքներդ դրեք։

Օրինակ՝ Վա՜հ, դո՜ւ ես, Կարո՜։

Վահ սոսկալի յե ցավում վերքս։
Ջան վաղը մեր դասերը կսկսվեն։
Դե քեզ տեսնեմ, վոնց ես սովորում։
Պահ պահ պահ ինչ հրաշալի կանաչեղեն է։
Վայ վայ վույ վույ չկա ու չկա։
Ափսոս ուշացա դասերից։
Ոֆ բավական հանգստացա։
Վահ, Յերվանդ, յեկար արդեն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 123. Հետևյալ ձայնարկությունները գործածեցեք նախադասությունների հետ։

Հե՜յ, ա՜յ, դե՛հ, ո՜հ, վա՜խ, ո՜ֆ, վա՜յ, ավա՜ղ:

## 16. ԿՈՉԱԿԱՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 124. Ձախ սյունակում յեղած նախադասությունները համեմատելով աջ սյունակի նախադասությունների հետ, ասացեք տարբերությունը։



| | |
|---|---|
| 1. Ընկերները բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը։ | 1 Ընկերնե՛ր, բարձրացրե՛ք աշխատանքի արտադրողականությունը։ |
| 2. Աշակերտները պայքարում են ուսման որակի համար։ | 2. Աշակերտնե՛ր, պայքարեցե՛ք ուսման որակի համար։ |
| 3. Բանվորները կատարում են իրենց պլանները։ | 3. Բանվորնե՛ր, կատարեցե՛ք ձեր պլանները։ |

Այն բառը, վոր ցույց է տալիս, թե խոսողը ում է դիմում մի բան ասելու կամ հարցնելու համար, կոչվում է կոչական: Կոչականները նախադասության անդամներից անջատվում են ստորակետով և միշտ շեշտ են ընդունում իրենց վերջին վանկի ձայնավորի վրա։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 125. Հետևյալ նախադասությունների սխեմաները կազմեցեք յերկու սյունակներում և ասացեք նրանց տարբերությունները։

| | |
|---|---|
| 1. Յերեխաները միասին դպրոց գնացին։ | 1. Յերեխանե՛ր, միասի՞ն եք գնում դպրոց։ |
| 2. Սուրիկը դպրոց գնաց։ | 2. Սուրի՛կ, դպրոց գնացի՞ր։ |
| 3. Գրիշան թատրոն է գնալու։ | 3. Գրիշա՛, թատրոն գնալու՞ ես։ |
| 4. Դու իզուր ես գնում։ | 4. Դու, Սուրե՛ն, իզուր ես գնում։ |
| 5. Ահա մեր դպրոցի պարծանքը։ | 5. Ահա, ընկերնե՛ր, մեր դպրոցի պարծանքը։ |
| 6. Ընկերների հետ գնում ենք դաշտն աշխատելու։ | 6. Գնանք դաշտն աշխատելու, ընկերնե՛ր։ |

Օրինակ՝

| | |
|---|---|
| Կոմունիստականները գերակատարեցին գարնանացանի պլանը։ | Կոմունիստականներ, գերակատարեցեք գարնանացանի պլանը։ |







> Կոչականները նախադասության անդամ չեն լինում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 126. Կարդացեք և ասացեք յերկու սյունակներում գրվածների տարբերությունը։

| | |
|---|---|
| 1. Աշակերտներ, սովորեցեք ձեր դասերը։ 2. Բանակայիններ, կռվեցեք հերոսաբար։ | Սիրելի՛ աշակերտներ, սովորեցեք ձեր դասերը։ Քաջարի՛ բանակայիններ, կռվեցեք հերոսաբար։ |

> Յեթե կոչականներն ունեն լրացումներ, չեշտը փոխադրվում է նրանց վրա։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 127. Արտագրեցեք հետևյալ նախադասությունները և կետերի տեղը դրեք համապատասխան լրացումներ՝ կոչական բառերի չեշտը փոխադրելով լրացումների վրա։

. . . բանվորներ, բարձրացրեք արտադրողականությունը։

. . . ուսանողներ, պայքարեցեք ուսման վորակի համար։

. . . սահմանապահներ, ուժեղացրեք ձեր հսկողությունը։

. . . պիոներներ, պատրաստվեցեք գնալ լագեր։

(Գերազանցիկ, տաղանդավոր, արթուն, աշխույժ)։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 128. Հետևյալ նախադասություններն արտագրելիս ընդգծեցեք կոչականները և դրեք չեշտերը։

Սուրիկ, այսոր գնալու՞ յես թատրոն։

— Վոչ, յես գնալու յեմ գրադարան գիրք կարդալու համար։

— Իսկ դու, Սաշա, հիմա ու՞ր ես գնում։

— Յես գնալու յեմ կինո, Արամն էլ է գնալու։

— Հա, Արամ, դու Սաշայի՞ հետ ես գնում, թե Գրիշայի։ Բա ուրեմն յես մենակ եմ գնալու։

— Չէ, Գրիշան էլ է գալիս գրադարան։

— Հա՛, Գրիշա, դու ընկերանու՞մ ես ինձ։

— Այո, յես նույնպես ժամը 6-ին գրադարան եմ գնալու։

— Սաշա, մի նայի՛ր՝ ժամը քանի՞ն է։

— Ժամը 6-ից պակաս է 15 րոպե, ուրեմն, սիրելի ընկերներ, արդեն ուշացել ենք։

— Այո, ուշացել ենք, և դժվար թե մեզ ներս թողնեն։

— Ընկերներ, մենք արդեն գնում ենք, դուք էլ շտապեցեք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 129. Արտագրեցե՛ք կոչականներն ու ձայնարկությունները։

— Բարո՛վ, Դավի՛թ, հոգնած ես դեռ.
Եկ, մի նստի՛ր, խոսենք կարգի՛ն,
Հետո դարձյալ կռիվ կանենք,
Եթե կռիվ կուզես կըրկի՛ն...

---

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը։
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քա՜հ-քա՜հ խընդաց
Մըսրա դաժան թագավորը։

---

Սասունիկ վախեցած վեր թռավ տեղից։
— Վա՜յ, կընիկ,— ասավ,— մի ճըրագ արա։

---

— Ի՞նչ յեղավ քեզ, մա՛րդ, գիշերվա՛ն կիսի՛ն,—
Բարկացավ վըրեն կընիկըն աղմուկով։

---

Յելավ Ոհանը, գոմը մըտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Ե՛յ, ճերմա՛կ ձի, մի՛նչ յե՞րբ,— ասավ,—
Կըհասցընես Դավթի կռվի՛ն։

---

- Ջա՛ն կարմի՛ր ձի, մի՛նչ յե՞րբ դու ինձ
Կըհասցընես Դավթի կռվի՛ն։

---

— Ե՛յ, ջա՛ն Սևուկ, մի՛նչ յե՞րբ,— ասավ,—
Կըհասցընես Դավթի կռվի՛ն։

(Հ. Թ.)



# 17. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 130. Արտագրեցե՛ք առաջին և յերկրորդ սյունակի բառերը, իսկ յերրորդ սյունակում նշեցե՛ք այն հնչյունների տառերը, վոր սղվել կամ փոխվել են։

| 1. | 2. | 3. |
|---|---|---|
| Հուր-ա-վառ | Հրավառ | Ու |
| Լույս-ավոր | Լուսավոր | . . . . . . . . |
| Թիվ-ա-կիր | Թվակիր | . . . . . . . . |
| Սեր-ելի | Սիրելի | Ե-ն փոխվել ե ի-ի |
| Մատյան-ա-վար | Մատենավար | . . . . . . . . |
| Մատանի-ագործ | Մատանեգործ | . . . . . . . . |

Յերբ բառերի վերջում նոր բառեր կամ վանկեր են ավելացվում, հաճախ վորոշ հնչյուններ սղվում կամ ուրիշ հնչյունների յեն փոխվում։

Հնչյունների այս փոփոխությունը կոչվում ե հնչյունափոխություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 131. Հետևյալ հոդվածից ջոկեցե՛ք հնչյունափոխության յենթարկված բառերը և բաժանեցե՛ք բաղադրիչ մասերի։

## ՄԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գարնանային մի առավոտ եր. մեր կոլտնտեսության բոլոր անդամները դրսում աշխատում և շնչում եյին թարմ ու զովաշունչ օդ։

Կոլտնտեսության գործունեյության մասին զեկուցեց ընկ. Յերվանդը՝ կոլտնտեսության նախագահը։ Զեկուցումից պարզվեց, վոր բոլորն ել սրտացավ ու բարյացակամ

վերաբերմունք ունեն դեպի կոլտնտեսության աշխատանքները։ Այս տարի չորացված են ճահճային տարածությունները և պատրաստվում են աշնանացանի համար։ Այգեգործական բրիգադը հրաշալի աշխատանք է տարել։ Մեր պարտիզպանները նույնպես գովասանքի արժանացան։ Նրանք լավ տիրություն են արել այգիներին և ժամանակին հարվածել են թշնամական տրամադրությունները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 132։ Հետևյալ բառերը վանկերի բաժանեցեք և քառակուսիի մեջ առեք այն վանկերը, որոնք վերջանում են բաղաձայնով, իսկ ձայնավորով վերջացող վանկերը միայն ընդգծեցեք։

Քար, փայտ, մուկ, ծաղիկ, քաղաք, Ջրաղաց, դարբին, քաջություն, մարդկային, ձիավոր, ձի, հայելի, հանգիստ, խորություն, գրագետ։

Օրինակ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| քար | = | [քար] | | |
| քաղաք | քա (ընդգծված) | [ղաք] | | |
| խորություն | = | [խոր] | -րու- (ընդգծված) | [թյուն] |

Երբ վանկը վերջանում է բաղաձայնով, կոչվում է փակ վանկ, իսկ երբ վերջանում է ձայնավորով, կոչվում է բաց վանկ։ Օրինակ՝ ջուր փակ վանկ է, իսկ ձու բաց վանկ է։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 133. Առաջին սյունակի բառերը համեմատեցեք երկրորդ սյունակի բառերի հետ և երրորդ սյունակում գրեցեք այն բառերը, որոնց ձայնավորները սղման կամ փոփոխման են ենթարկվել։

| | | |
|---|---|---|
| Ջուր-հոր | Ջրհոր | Ջուր |
| Տուն-ակ | Տնակ | . . . . . . |
| Հատուկ-ա-պես | Հատկապես | . . . . . . |
| Անասուն-ական | Անասնական | . . . . . . |
| Սիրտ-առ-ուչ | Սրտառուչ | . . . . . |
| Գիր-ավոր | Գրավոր | . . . . . . |
| Ամիս-աթիվ | Ամսաթիվ | . . . . . . |
| Բժիշկ-ություն | Բժշկություն | . . . . . . |
| Լույս-ավոր | Լուսավոր | . . . . . . |
| Աշխույժ-ություն | Աշխուժություն | . . . . . . |

Բառերի վերջում նոր բառեր կամ վանկեր ավելացնելիս նրանց մեջ եղած ու, ի հնչյունները և ույ երկհնչյունի յ հնչյունը սղվում են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 134. Հետևյալ բառերի վերջում համապատասխան մասնիկներն ավելացնելով՝ կազմեցեք նախադասություններ, ընդգծելով սղվող հնչյուն ունեցող բառերը։

Ջուր, գարուն, աշուն, պատիվ, ժողովուրդ, թիվ, ժիր, բույս, ձուկ, հազիվ, ճշմարիտ, մարգարիտ։

(Ական, ային, ավետ, ավոր, իկ, ություն, ակ)։

Օրինակ՝ ջրային տնտեսությունը կարգավորեց իր աշխատանքները։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135. Հետևյալ բառերը բաժանեցեք իրենց բաղադրիչ մասերի և ընդգծեցեք փոփոխվող բառերը։

Սիրելի, հանդիպել, գիտակցություն, պաշտոնեյու-

թյուն, պատանեկական, ձվաձև, մատենավար։

Որինակ՝ սիրելի—սեր-ելի. ե-ն փոխվել է ի-ի.

> Բառերի վերջում նոր բառեր կամ վանկեր ավելացնելով հաճախ այդ բառերի միջի ե-ն փոխվում է ի-ի, յա-ն փոխվում է ե-ի, ու-ն փոխվում է վ-ի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 136. Հետևյալ հոդվածից ջոկեցեք շեղագրով տպված բառերը և վերածեցեք բաղադրիչ մասերի։

Հեշտ է գրվել թղթի վրա . . .

(Ն. Զարյան)

Ծառախոտների խոսքերը թրթռում էին օդի մեջ՝ ամբոխի գլխին։

(Գորկի)

Զինվորների շարքը միջից կիսվեց։

(Գորկի)

Զորքերը ձգված էին խճուղու երկարությամբ։

(Սերաֆիմովիչ)

Անծանոթը նստած էր մտածկոտ։

(Հյուգո)

Որն արագապես մթնում էր... Դռան արանքից լույսի շերտերը հազիվ էին նշմարվում։

(Նար-Դոս)

Որինակ՝ Թղթի—թուղթ-ի։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 137. Հետևյալ հոդվածից ջոկեցեք հնչյունափոխված բառերը և նրանցով կազմեցեք պարզ նախադասություններ։



## ՄԵՐ ՓՈՐՁԱԿԱՅԱՆԸ

Այս տարի ցանված են բուժական բույսեր՝ լվածաղիկ և մկնխոտ։ Ցանված է նաև անասունի կեր։ Դաշտերում բուսականությունը նույնպես հրաշալի է։ Պատրաստված են ջրի առուները։ Ջրվորներն անձնվեր ու սրտացավ վերաբերմունք ունեն։ Կխավ ած ու ցանված են ածուները։ Ջրելու աշխատանքները տարվում են անխափան կերպով։ Թռչնաբուծությունը զարգացած է։ Պարտիզպանները պայքարում են բոլոր վնասատուների դեմ։ Կրաջրով քսված են բոլոր ծառերը։ Մկնդեղով և փարիզյան կանաչով սրսկված են բոլոր այգեստանները։ Մեր գերազանցիկները պարգևատրվեցին վոսկեզոծված և փղոսկրյա գրիչներով։ Նրանք անսահման սիրվում են մեր բոլորի կողմից։ Այս տարի մեծ բերք ենք սպասում։

# 18. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

## Արմատ յեվ ածանց

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 138. Արտագրեցեք հետևյալ բառերը և ընդգծեցեք ամեն մի սյունակում կրկնվող և միևնույն իմաստն ունեցող մասերը։

| | | |
|---|---|---|
| Մարդ | Գործ | Ընկեր |
| Նախամարդ | Գործիչ | Ընկերաբար |
| Մարդկային | Գործողություն | Ընկերային |
| Մարդավարի | Գործունյա | Ընկերություն |
| Մարդկություն | Գործնական | Ընկերավարի |
| Տմարդի | Գործավարություն | Ընկերական |
| Անմարդ | Անգործ | Անընկեր |

Որինակ՝ մարդավարի, մարդկային, մարդկություն և այլն։

Բառի այն հիմնական մասը, վորը կրկնվում է մի շարք բառերի մեջ և ամեն տեղ միևնույն ընդհանուր իմաստն ունի, կոչվում է արմատ:

Այն մասնիկը, վորն ավելանում է արմատի սկզբից կամ վերջից և նոր բառ է կազմում, կոչվում է ածանց։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 139. Արտագրեցեք ածանցավոր բառերը և արմատները գծիկով անջատեցեք ածանցներից։

Տնակ, փոքրիկ, տաքուկ, ճագուկ, ընկերական, աշակերտական, հարվածային, քաղաքային, գունատ, հերոսաբար, քաջաբար, փայտեղեն, յերկաթեղեն, արևմտյան, արևելյան, քաջություն, վորսորդություն, Չինաստան, Ուզբեկստան, բանջարանոց, ղողանջյուն, ղողղոջյուն, գործիչ, յերգիչ, ծակոտի, աշակերտուհի, բանվորուհի, չորրորդ, յերրորդ, հինգերորդ, վեցերորդ, հայերեն, ռուսերեն, յեզակի, հոգնակի, քաղաքացի, գյուղացի, հնոցապան, դռնապան, վառարան, գրադարան, խնձորենի, տանձենի։

Արմատների վերջից ավելացող ածանցները կոչվում են վերջածանցներ։

Գործածական վերջածանցներն են՝ ակ, իկ, ուկ, ական, ային, ատ, աբար, եղեն, յան, ություն, ոտ, ստան, ոց, անոց, յուն, իչ, ոտի, ուհի, րորդ, երորդ, երեն, ակի, ցի, ացի, պան, որդ, ենի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 140. Հետևյալ բառերից ջոկեցեք պարզ և ածանցավոր բառերը և գրեցեք առանձին սյունակներում։

Ջրային, սեղան, փայտեղեն, մատիտ, թուղթ, մանկական, վիրավոր, տախտակ, գյուղացի, յերամ, ննջարան,



հատ, վառարան, գիրք, բարձիկ, սփռոց, թռչուն, յերկնային, մրգեղեն, թանաք, ցեղական, դուռ, ծաղկանոց, անտառ, վոսկեղեն, յերկաթ, ընկուզենի, առատուր, քաղաքական, կուլտուրապես, ճանապարհ, գույնզգույն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 141. Հետևյալ բառերն արտագրեցեք և ընդգծեցեք ածանցները։

Մակագրել, մակդիր, մակընթաց, ներարկել, ներգործել, ներուժ, գերազանց, գերագույն, գերածախս, հակադիր, պարփակել, պարուրել, վերադիր, անտուն, ապերախտ, վերլուծել, դժբախտ, տգեղ, վերնագիր, չտես, ապաբախտ, տմարդի, չխոսկան։

Արմատների սկզբում ավելացող ածանցները կոչվում են նախածանցներ։ Ամենագործածական նախածանցներն են՝ արտ, գեր, մակ, ներ, հակ, վեր, ան, ապ, տ, դժ, չ:

Նախածանցներից ան, ապ, դժ, տ, չ կոչվում են ժխտական, վորովհետև դրվելով բառերի վրա՝ հակառակ իմաստ են տալիս նրանց։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 142. Արտագրելիս հետևյալ բառերին տըվեք համապատասխան նախածանցներ։

Հարվածային, ճառել, ընթացություն, գրավել, կանգնել, պետք, գեղ, գոհ, խոսկան։

(գեր, հակ, ան, մակ, ներ, տ, դժ, չ)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 143. Հետևյալ բառերի նախածանցները, արմատները և վերջածանցներն արտագրեցեք իրար դիմաց, առանձին սյունակներում։

Լուսավոր, տգեղություն, տմարդություն, դժգոհու-

թյուն, վերականգնել, մակագրություն, ներգրավել, գերազանցիկ, հակադրություն, ներգործում, ապերախտություն։

Օրինակ՝ մակընթացություն, տգեղություն։

| Նախածանց | Արմատ | Վերջածանց |
|---|---|---|
| Մակ | ընթաց | ություն |
| Տ | գեղ | ություն |
| . . . . . . . | . . . . . . . . . | . . . . . . . . |
| . . . . . . . | . . . . . . . . . | . . . . . . . . |
| . . . . . . . | . . . . . . . . . | . . . . . . . . |
| . . . . . . . | . . . . . . . . . | . . . . . . . . |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 144. Հետևյալ ածանցավոր բառերն արտահայտեցեք սխեմայով։

Գործ, գործունյա, գործիչ, անգործ։
Տուն, տնակ, տնային, անտուն։
Գույն, գունավոր, դժգույն, անգույն։

Օրինակ՝




> Ածանց չունեցող բառերը կոչվում են արմատական կամ պարզ բառեր։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 145. Հետևյալ հոդվածից ընտրեցեք ածանցավոր բառերը և ընդգծեցեք ածանցները մեկ գծով, իսկ արմատները՝ յերկու գծով։



Տիտանապես Լենին-դյուցազն «հառաջ» կանչեց, ու ձայնի
հետ
Բանվորների գնդերն յելան ինչպես վարար ծովեր ու
գետ։
Հողվորների գետեր յեկան հեռու մոտիկ հող ու ճամբից.
Ժպտաց Լենինն այն լուսնի պես, վոր դեռ նոր ե
ծագում ամպից.
Յեկան խուցից, խոհանոցից ու կիտվեցին մի մարդու
պես.
Կանայք դժգույն ու հերարձակ, ճակատներով
արեվակեզ,
Խրոխտ ինչպես ջահել վագրեր, սակայն դալուկ ու
սովատանջ
Նայում եյին հսկաներին՝ սրած ուշիմ աչք ու ականջ,
Կարիքի սև կաթով սնված տղամարդիկ յեկան խինդով,
Ասես խմբերն առյուծների, դաշտը լցրին խոլ շռինդով,
Նրանց տանջված աչքերի մեջ անհաշտ կռվի բոցն եր
շողում։

(Հ. Շիրազ)

## ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

| | |
|---|---|
| Ծառ-տունկ | Ծառատունկ |
| Քար-անձավ | Քարանձավ |
| Արև-ծագ | Արևածագ |
| Փայտ-շեն | Փայտաշեն |
| Գրիչ-տուփ | Գրչատուփ |

> Յերկու կամ ավելի արմատներից կազմված բառերը կոչվում են բարդ բառեր։

## 19. ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| Քարաշեն . . . . . . | քար | ա | շեն |
| Սեղանատուն . . . . . | սեղան | ա | տուն |
| Քանդակագործ . . . . . | քանդակ | ա | գործ |
| Գետափ . . . . . . . | գետ | — | ափ |
| Դրամարկղ . . . . . . | դրամ | — | արկղ |
| Դասընկեր . . . . . . | դաս | — | ընկեր |

| | | | |
|---|---|---|---|
| ՀԽՍՀ | Հայկական | Խորհրդային | . . . |
| | Սոցիալիստական | Հանրապետություն | . . . |

> Բարդ բառերը կազմվում են հոդակապով, առանց հոդակապի կամ բառերի հապավումներով։
> Հոդակապը ա ձայնավորն է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 146. Հետևյալ բարդ բառերը, ըստ որինակի, բաղադրիչ մասերի վերածեցեք։

Հողաչափ, զուգընթաց, թղթատար, ծովափ, դասընկեր, հացթուխ, թանաքաման, սևահող, գրատախտակ, լրագիր, հացատուն, հողագործ, թղթատար, ամբարձիչ, ոդանավ, լավատես, բայարմատ, միահարկ, քաջամարտ, մենամարտ, նավավար, յուրահատուկ, քառաթև, գյուտարար, հողաչափ։

## 20. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

| | |
|---|---|
| 1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։ | ԽՍՀՄ |
| 2. Լուսավորության ժողովրդական կոմիսար։ | Լուսժողկոմ |
| 3. Քաղաքային Խորհուրդ։ | Քաղխորհուրդ |

> Հապավումները կատարվում են՝ 1) բառերի ըսկզբի տառերով, 2) բառերի մասերով, 3) առաջին բառի առաջին մասով և վերջին ամբողջ բառով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 147. Հետևյալ պարզ բառերն ըստ տրված որինակի միացնելով կազմեցեք բարդ բառեր։

Վարդ—գույն, ծառ—տունկ, ձյուն—պատ, կաթն—գույն, դաս—ընկեր, հող—շերտ, գիր—սենյակ, յերկաթ—ուղի, ջուր—ամբար, ձուկն—վաճառ, բազում—մարդ, մեն—մարտ, շոգի—նավ, թերի—հավատ, թիվ—համար, սալ—հատակ, հեռ—գիտակ, մեքենա տրակտորային կայան, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ, կոլեկտիվ տնտեսություն։

Որինակ՝ վարդագույն, ջրամբար և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 148. Հետևյալ բարդ բառերով կազմեցեք նախադասություններ, ընդգծելով բարդության վերջին բառի առաջին տառը։

Նավապետ, քարաժայռ, լրագիր, գրատախտակ, մրգավաճառ, սարալանջ, ծաղկաման, ձիարշավ, թիավար, բնագետ, ձիավարժ, անասնապահ, լուսարձակ, ջրաղաց։

Որինակ՝ Նավապետը ղեկավարում է իր նավը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 149. Ձախ և աջ սյունակների բառերը համեմատելով իրար հետ՝ արտագրեցեք և յերրորդ սյունակում գրեցեք սղվող հնչյունների տառերը։

| | | |
|---|---|---|
| Արև—յելք | արևելք | յ |
| Բարձր—վորակ | բարձրորակ | վ |
| Ծով—յեզր | ծովեզր | . . . . . . |

| | | |
|---|---|---|
| Քայլ—յերգ | քայլերգ | . . . . . . |
| Լավ—վորակ | լավորակ | . . . . . . |
| Ձուկն—վորս | ձկնորս | . . . . . . |
| Անձրև—վորդ | անձրևորդ | . . . . . . |
| Քաջ—վորդի | քաջորդի | . . . . . . |
| Ան—յեզր | անեզր | . . . . . . |
| Ան—վորակ | անորակ | . . . . . . |

Բարդ բառեր կազմելիս՝ յերկրորդ բառերի ըս-կըզբի յե և վո յերկհնչյունների յ և վ հնչյունները սղվում են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 150. Հետևյալ բառերը միացնելով կամ այդ բառերի վրա նախածանցներ ավելացնելով՝ կազմեցե՛ք բարդ կամ ածանցավոր բառեր և գործածեցե՛ք նախադասությունների մեջ։

Փիղ—վոսկր, վոչ—վոք, շուք—յերթ, այծ—յեղջյուր, ան—յերևակայելի, լայն—յեզր, ան—վողնաշար, ան—յեբեր, ան—վորս, ստոր—յերկրյա, ան—վողորկ, վեր—յելք, ծունկ—վոսկր, յերկ—յերեսանի, ան—վորոշ։

Օրինակ՝ նոր—յեկ, նորեկ, նորեկը բարևեց մեզ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 151. Հետևյալ հատվածներից ջոկեցե՛ք բարդ բառերը և վերածեցե՛ք բաղադրիչ մասերի։

Լուսակերտ է ապարանքը Թագմորի,
Անապատում, վորպես յերազ վոսկեհյուս,
Ցոլքն հարյուր սյունի վրա մարմարի
Սլանում է աշտարակը յերկնասույզ։

---

Փիրուզ ծովը, վոր փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի,



Ձունի այնպե՛ս, այնպե՛ս փրփուր ձյունաթույր,
Ինչպես կուրծքը լուսապայծառ Բամբիշի։

---

Շշնջում է լուսաթաթախ Բամբիշի
Ականջին ի վար այնպես քնքո՛ւշ, հեզասահ,
Ինչպես լուսնի շողակաթը թավիշի,
Այն հոյակապ սյուներն ի վար մարմարյա։

(Ա. Իսահակյան)

Օրինակ՝ լուսակերտ=լույս-ա-կերտ։

## 21. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Դ և Թ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹԻՈՒՆ 152. Հետևյալ բառերով կազմեցե՛ք նախադասություններ ըստ տրված օրինակի։

Արթուն, խորթ, թարթել, հորթ, մորթել, շողոքորթել, շուրթ, սաղարթ, քերթել, զվարթ, կիրթ, հերթ, մերթ, ցերթ, Պարթև, վորթ (վազ)։

Բարդ, մարդ, վարդ, բերդ, զարդ, յերդում, կարդալ, նյարդ, լյարդ, ժողովուրդ, խորհուրդ, հորդ, թակարդ, ճանապարհորդ, վորդ, վորսորդ, վորդի, յերրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն։

Օրինակ՝ արթուն պահակները հսկում են մեր կոլտնտեսության գույքը։

Բարդ խնդիրներ ենք լուծում արդեն։

Յերբեմն բառերի մեջ լսվում է թ, բայց գըրվում է դ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 153. Արտագրեցե՛ք և կետերի տեղը դրե՛ք բաց թողած տառերը։

Վար...երի կարմիր փնջերով զար...արեցին հերոսի

կուրծքը։ Հոր...տատ անձրևների ժամանակ ճանապար-հոր..., ությունը վտանգավոր է։ Ամրացել է Խորհր...ային Միության ժողովու...ների բարեկամությունը։ Մեր հերոս ո...աչուները տիրեցին Հյուսիսային Բևեռին։ Յեր-րոր...անգամն է, որ մեր սավառնակներն անցան Հյուսիսային Բևեռի վրայով։ Մի որսոր... իր փար...ամ հասակով կանգնած էր ծառերի կանաչազար...սաղար...-ների տակ և թակար...ներ էր լարում վայրի անասուններին։ Ծառերը զար...արված են ծաղիկներով, իսկ թըռչունն'երը զվար...ագին դայլայլում են խանդավառ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 154. Ձեր ուղղագրական բառատետրում գրեցեք այնպիսի բառեր, որոնց մեջ դ-ն հնչում է թ։

## Գ և Ք ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 155. Գրեցեք հետևյալ բառերից կազմված նախադասություններ։

Թարգման, Պարգև, յերգ, կարգ, արգելք, միրգ, ճիգ, շոգ, հոգնել, նորոգել, օգնել, կարագ, մարագ, ուրագ, հոգնակի, օգտակար, վոգևորություն, ծագել, հագնել, պարգև, ավագ։

> Հաճախ յերբ ք է լսվում, գ է գրվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 156. Արտագրեցեք և կետերի տեղը դրեք բաց թողած տառերը։

Ձեր յեր...ն իմ սրտի ցանկությունների թար...մանն է։ Ա՜յ տղա, անունդ Ավա..., գնա մարա.... բեր կարա...։ Նորո...ման ցեխի ավա...վարպետին՝ Սար...իս Գրի... որյանին պար... ևատրեցին պատվո գրով։ Մար...արիտն ու Սար... իսը բամբակի դաշտն են գնում։ Ամեն առավոտ, արևը դեռ չծա...ած, մեծ վո...ևորու-



թյամբ աշխատանքի յեն գնում։ Ոչ ոք չի կարող նրանց ար...ելք դառնալ։ Այսօր մենք ստացանք նոր հրահան... Թար...մանությամբ է զբաղված Սար...իսը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 157. Ձեր ուղղագրական բառատետրում գրի առեք այնպիսի բառեր, որոնց մեջ գրվող գ-ն հնչում է ք։

## Ջ և Չ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 158. Հետևյալ բառերով կազմեցեք նախադասություններ։

Արջ, լուրջ, շրջել, վորջ, կամուրջ, թրջել, մրջյուն, յերջանիկ, շրջաբերական, շրջան, վերջ։

Ջղջալ, յեղջյուր, չղջիկ, աղջիկ, վողջույն, առողջ, ամբողջ։

Առաջարկ, առաջին, աջակից, հաջել։

Մեջ, միջատ, միջոց, էջ, միջակետ։

> Արմատական բառերի մեջ ր և ղ բաղաձայններից հետո հաճախ լսվում է չ, գրվում է ջ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 159. Ուղղագրական բառատետրում գրի առեք այնպիսի բառեր, որոնց մեջ ջ-ն հնչում է չ։

## Ձ և Ց ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 160. Հետևյալ բառերով կազմեցեք նախադասություններ։

Արձակուրդ, արձան, արձանագրել, արձագանք, բարձ, բարձր, դարձ, դարձյալ, դերձակ, ընդարձակ, համարձակ, օրավարձ, սանձարձակ, փորձ։

> ր բաղաձայնից հետո, յեթե լսվում է ց, մեծ մասամբ գրվում է ձ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 161. Արտագրելիս կետերի տեղը դրեք բաց թողած տառերը:

Ար..ակուրդին մերոնք գյուղ են գնում: Այդ գյուղի սարերի բար..ր գագաթները դեռ ձյունով ծածկված են: Գյուղացիները մեծ համար..ակությամբ են խոսում իրենց ընդար..ակ խոտհարքները հն..ելու մասին: Նրանք մեծ փոր.. ունեն: Մի քանի անգամ շրջանի կենտրոնի կող-մից ար..անագրված են նրանց այդ հաջողությունները: Այդ հաջողություններն ար..ագանք են գտել շրջանի գյուղերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 162. Ձեր բառատետրում գրեցեք այնպիսի բառեր, վորոնց մեջ ձ գրվում է, բայց հնչում է ց:

## Ղ և Խ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 163. Հետևյալ բառերով կազմեցեք նախա-դասություններ:

Ղ—թուղթ, աղբյուր, աղբ, աղտ, հաղթել, չղջիկ, խեղ-դել, ուղտ, վողբ, աղջիկ, աղջամուղջ, այծեղջյուր:

Խ—յերախտիք, տախտակ, բախտ, ժխտել, պանդուխտ, նախշուն:

> Արմատական բառերի մեջ բաղաձայններից առաջ յերբ խ է լսվում, մեծ մասամբ ղ է գրվում: խ շատ քիչ է գրվում, այն էլ սովորաբար տ բաղաձայնից առաջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 164. Արտագրելիս կետերի տեղը դրեք բաց թողած տառերը:

Ա...ջիկը սափորն ուսին գնում եր ա...բյուրը ջրի: Սաթիկը թ...թապանակի մեջ շատ թ... թեր եր տեղա-վորել:



Սանդու...տը սիրում է դե...ձ: Տետրակիդ շապ-կին թու...թ քաշիր, վոր չկե...տոտվի: Ու...տը քայ-լում է, դե...ձանիկն ու չ...ջիկը թռչում են: Ա..բն ու կե..տը մաքրեցեք: Թոքա..տը վարակիչ հիվանդություն է:

## Ր ՅԵՎ Ռ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 165. Հետևյալ բառերով կազմեցեք նախա-դասություններ և ընդգծեցեք ռ բաղաձայնին հաջորդող բաղա-ձայնները:

Արծաթ, արծիվ, դառնալ, արտ, դռնակ, զարդ, խառ-նել, նռնակ, ռուբլի, ձեռնարկ, սառնություն, բռնել, Ռոզա, Ռիմա, ռեֆորմ, ռեվոլուցիա:

> Արմատական բառերում ն բաղաձայնից առաջ գրվում է ռ, մյուս բաղաձայններից առաջ մեծ մա-սամբ գրվում է ր:
>
> Բառասկզբում գրվում է ռ, բացի րոպե բառից:

ՎԱՐԺՈՒԹՈՒՆ 166. Արտագրեցեք և կետերի տեղ դրեք բաց թողած տառերը:

Դա..նություն, լե..նաշղթա, խու..ձ, լե..նադա-գաթ, մա..դ, լե..նանցք, կա..դալ, բե..նակիր, մա..դիկ, դա..ձյալ, ա..նչություն, վա..դ, խա..նուրդ, բ..նել, ա..նել, սավա..նակ, ա..ճիճ, ա..ժեք, խա..նաշփո-թություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 167. Հետևյալ հոդվածից ջոկեցեք այն բա-ռերը, վորոնց մեջ.

1. Գրված է դ, բայց կարդացվում է թ.
2. Գրված է գ, բայց կարդացվում է ք.
3. Գրված է ջ, բայց կարդացվում է չ.

4. Գրված է ձ, բայց կարդացվում է ց։
5. Գրված է ղ, բայց կարդացվում է խ։

## «ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ»-Ի ԼԱԳԵՐԸ

Շոգերն արդեն սկսվում են։ Ամառային արձակուրդը մոտենում է։ Դպրոցները զարդարված են և պատրաստվում են տարեվերջի քննություններին։ Տրամադրությունը շատ բարձր է։ Յերկրորդ տարին է, որ մասնակցում եմ յերգեցիկ խմբին և արձակուրդներին իմ ընկերների՝ Գևորգի, Վարդանի, Աբգարի և Ավագի հետ գնում ենք «Կաթնաղբյուր»-ի լագերում հանգստանալու։ Առավոտները զովաշունչ քամին սանձարձակ, բայց դուրեկան հորձանքներով հոսում է անտառի սաղարթների միջով, իսկ մենք ֆիզկուլտուրնիկներս, տղաներն ու աղջիկները միասին, կարգով գնում ենք մերձակա կամրջի յեզերքին նոր կառուցված հրապարակը՝ մեջքային վարժություններ կատարելու համար։ Ամեն անգամ, յերբ արևը բարձրանում է, մենք գնում ենք մերձակա գետակը լողանալու համար։ Դուրեկան է այդ գետակի ջրերում լողանալը, մանավանդ որ ջրերը շատ վճիտ են և խեղդվելու էլ վտանգ չկա։

Մենք յերբեմն էլ անտառ ենք բարձրանում զբոսնելու համար։ Անտառում մենք հաճախ ենք տեսել փախչող յեղջերուներ և յերբեմն էլ արջեր։

Յերբեք չեմ կարող մոռանալ «Կաթնաղբյուր»-ի լագերը։

## Ը ՁԱՅՆԱՎՈՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 168. Հետևյալ բառերով կազմեցեք նախադասություններ։

Ընդունել, ընթերցարան, ընկեր, ընկուզենի, ընտանի,



ընտրել, ընդարձակ, զբոսանք, զգեստ, զբաղմունք, զգաստ, զգացողություն, զգուշանալ։ Շտապել, շտեմարան, սկսել, սկիզբ, սպիտակ, ստեղծել, ստիպել, Սուրիկը, գրիչը, աշակերտը, ուսուցիչը, դպրոցը, մկրատը, քաղցր, ծանր, գըլխարկ, գնալ, գտնել, գնգալ։ Դասընթաց, դասընկեր, հատընտիր։

> Բառի սկզբում լսվող ը ձայնավորը գրվում է։
> ս, զ, շ բաղաձայններով սկսվող բառերից առաջ ը-ն չի գրվում։
> Բառերի վերջում լսվող ը ձայնավորը գրվում է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 169. Հետևյալ բառերը բաժանեցեք բաղադրիչ մասերի։

Դասընկեր, անընդհատ, հատընտիր, անընկճելի, դասընթաց, անըմբռնելի, գերընտիր, անընդունակ։

> Բարդ կամ ածանցավոր բառերի ը-ով սկսվող յերկրորդ բառի ը ձայնավորը չի սղվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 170. Հետևյալ նախադասություններից արտագրեցեք ը հնչյունով սկսվող բառերը։

Զավենն ընդունակ աշակերտ է։ Կոլտնտեսականներն ստացան առատ բերք։ Մեր ընտանիքն ապրում է ուրախ ու յերջանիկ։ Յես ակտիվ մասնակցություն ունեցա Գերագույն Խորհրդի ընտրություններին։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 171. Հետևյալ նախադասություններից ընտրեցեք այն բառերը, որոնց սկզբում ը լսվում է, բայց չի գրվում։

Գարնանացանն արդեն սկսվեց, հանգստյան տան

պարտեզում զբոսնում էին բանվորները։ Շտապում եմ, վորովհետև ընկերներս սպասում են ինձ։ Զգաստ պետք է լինել և ազատվել բարեհոգությունից։ Չպետք է սքողել թերությունները, այլ բաց անել՝ նրանց վերացնելու համար։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 172. Հետևյալ բառերը վանկերի բաժանել։

Կոլտնտեսական, ստախանովական, սոցմրցում, գրադարան, մկրատ, Մկրտիչ, գլխարկ, գրչակոթ, ստացական, հանգստություն, շտապել, սկսել, դասընկեր, կարգադրություն, ընթերցարան, ծովեզր, հանգցնել, նվիրել, գրատախտակ, զգաստություն։

## 22. ՏՈՂԱԴԱՐՁ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 173. Կատարեցեք հետևյալ բառերի տողադարձի բոլոր ձևերը։

Թմբուկ, խրճիթ, տղամարդ, ստորակետ, շտապել, զանգված, զսպանակ, խնձույք, բրդոտ, խորհրդավոր, ինքնակամ, թնդյուն, ժպիտ, ժրաջան, պղնձեղեն, ծոռակ, տրպարան, սկսել, շքանշան, զգեստ, սփոփանք, շտեմարան, խուճապ, զգաստ, ծխախոտ, թրթուր, ինսպեկտոր։

Օրինակ՝

| | |
|---|---|
| ծխնելույզ | ծըխ-նելույզ, ծխնե-լույզ |
| սրընթաց | սը-րընթաց, սրը-ընթաց, սրըն-թաց, |
| սկսել | ըս-կըսել, ըսկը-սել |
| շտապել | ըշ-տա-պել, շտա-պել |



Երբ բառն ամբողջությամբ չի տեղավորվում նույն տողում, մի մասը տանում են մյուս տողը. սա կոչվում է **տողադարձ**։ Տողադարձի վերջի կամ սկզբի վանկում լսվող ը-ն գրվում է։

## 23. ԲԱՌԱԳՐՔՈՒՅԿԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 174. Անգիր սովորել հայկական տառերն իրենց հերթական կարգով — ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 175. Հետևյալ բառերը դասավորել սյունակներում։ Առաջին սյունակում դասավորելիս պահպանել միայն առաջին տառերի այբբենական հերթականությունը։ Երկրորդ սյունակում դասավորելիս նկատի ունենալ առաջին և յերկրորդ տառերի այբբենական հերթականությունը, իսկ յերրորդ սյունակում դասավորելիս հաշվի առնել առաջին, յերկրորդ և յերրորդ տառերի դասավորումը և այսպես՝ չորրորդ, հինգերորդ և այլն։

Աբգար, Ազիզ, Ազատ, ագարակ, ավերակ, անցուդարձ, ազդանշան։

Բաբախել, բորբոքել, բողոքել, բերան, բեղ։

Գագաթ, Գիքոր, գրագետ, գտնել, գնալ, գինի, գիծ, գերան։

Դադար, դրոշ, դրդել, դրամ, դուրս, դուռ, դմակ, դիտակ, դիակ, դերանուն, դեմառդեմ։

Զամբյուղ, Զվարթ, զորք, զատել, զույգ, զինաթափ, զենիթ, զեղծում.

Մագնիս, մրցում, մատիկ, մրրիկ, մրոտ, մտերիմ, մր-

մածել, մսեղեն, մսագործ, մորթ, մոռացկոտ, մնացորդ, միրգ, միջատ։

Օրինակ՝

| | | |
|---|---|---|
| Աբգար | Աբգար | Աբգար |
| Ազիզ | Ագարակ | Ագարակ |
| Ազատ | Ազիզ | Ազատ |
| Ագարակ | Ազատ | Ազդանշան |
| Ավերակ | Ազդանշան | Ազիզ |
| Անցուդարձ | Անցուդարձ | Անցուդարձ |
| Ազդանշան | Ավերակ | Ավերակ |
| Բաբախել | Բաբախել | Բաբախել |
| Բորբոքել | Բերան | Բեղ |
| Բողոքել | Բեղ | Բերան |
| Բերան | Բորբոքել | Բողոքել |
| Բեղ | Բողոքել | Բորբոքել |

Բառարանում բառեր գտնելու համար նախ պիտի գտնել առաջին տառը, վորից հետո այբբենական կարգով պիտի գտնել յերկրորդ տառը, ապա յերրորդը և այլն։

## 24. ՈՒՐԻՇԻ ԽՈՍՔ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 176. Հետևյալ հոդվածից ջոկեցեք և արտագրեցեք ուրիշի ասած խոսքերը։

Յերեկ մեր դիրեկտորը հայտարարեց. «Վաղը սանիտարական օր է, բոլոր աշակերտները պիտի մասնակցեն աշխատանքներին»։ Դիրեկտորն ասում եր. «Մեր սանիտարական օրվա աշխատանքները տևելու յեն առավոտյան



ժամը 7-ից մինչև յերեկոյան ժամը 5-ը։ Այդ ժամանակվա ընթացքում պիտի մաքրվի թե դպրոցի շենքը և թե ամբողջ բակը»։

Ուրիշի կողմից ասված խոսքը, յերբ մեջ է բերվում խոսողի կամ գրողի կողմից, կոչվում է ուրիշի խոսք։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 177. Կարդացեք աջ ու ձախ սյունակների նախադասությունները և ասացեք նրանց տարբերությունը։

| Ուղղակի խոսք | Անուղղակի խոսք |
|---|---|
| Սուրենն ասաց. «Յես չեմ կարող գալ»։ | Սուրենն ասաց, վոր ինքը չի կարող գալ։ |
| Դիրեկտորը հայտարարեց. «Վաղը մեր պարապմունքներն սկսվելու յեն»։ | Դիրեկտորը հայտարարեց, վոր վաղը մեր պարապմունքներն սկսվելու յեն։ |
| Ուսմասվարը մեր ուսուցչին ասաց. «Գնացեք և ձեր դասարանը կարգի բերեք»։ | Ուսմասվարը մեր ուսուցչին ասաց, վոր գնա և իր դասարանը կարգի բերի։ |

Յերբ ուրիշի խոսքը մեջ է բերվում բառացիորեն, անփոփոխ կերպով, կոչվում է ուրիշի ուղղակի խոսք, իսկ յերբ մեջ է բերվում միայն բովանդակությունը, բայց վոչ ասողի բառերով, կոչվում է ուրիշի անուղղակի խոսք։

Ուղղակի խոսքն առնվում է չակերտների մեջ, իսկ անուղղակի խոսքն անջատվում է բութով կամ ստորակետով և չակերտների մեջ չի առնվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 178. Արտագրեցեք հետևյալ նախադասությունները և ասացեք՝ ինչ կետադրության նշաններ են գործածված։

Լենինն ասում եր. «Ով չի աշխատի, նա չի ուտի»։

——

«Ով չի աշխատի, նա չի ուտի»,— ասում եր Լենինը։

——

«Ով չի աշխատի,— ասում եր Լենինը,— նա չի ուտի»։

> Յեթե ուղղակի խոսքը հեղինակի խոսքից հետո յե դրված, նրանից առաջ դրվում ե միջակետ, իսկ ուղղակի խոսքն առնվում ե չակերտների մեջ։
>
> Յեթե ուղղակի խոսքը հեղինակի խոսքից առաջ ե դրված, նրանից հետո դրվում ե ստորակետ և գիծ։
>
> Յեթե հեղինակի խոսքն ընկած ե ուղղակի խոսքի մեջտեղ, ապա հեղինակի խոսքից առաջ և հետո դրվում ե ստորակետ և գիծ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 179. Հետևյալ որինակներն արտագրելիս այնպես դասավորեցեք, վոր հեղինակի խոսքերն ընկնեն ուղղակի խոսքերի մեջտեղը կամ նրանցից հետո. վորտեղ վոր հարկավոր ե, կարող եք հեղինակի խոսքի բառերի մեջ տեղափոխություններ կատարել։

Ուսուցիչը հայտարարեց. «Ով վոր խնդիրները շուտ լուծի, կարող ե դուրս գնալ»։ Գործարանի դիրեկտորն ասաց. «Հայտարարված ե ստախանովական ամիս, բոլորս միասնական ուժերով պիտի աշխատենք իրագործել մեր պլանները»։ Մեր բրիգադիրը հայտարարեց. «Համաձայն մեր սոցմրցման պայմանագրի, մինչև ամսիս 25-ը պիտի վերջացնենք գարնանացանը»։ Այնտեղ մեկը կանգնած կանչում ե՝ «Յեկեք, շուտ յեկեք, ուշանում ենք, աշխատանքն



արդեն սկսվել ե»։ Միլիցիոները հարցրեց՝ «Ո՞վ ե գալիս»։ Մեքենավարը հայտարարեց. «Այսոր յես սահմանելու յեմ ստախանովական ռեկորդ»։ Մեր ռազմագիտության դասատուն ասաց՝ «Վաղը բոլորս գնալու յենք լագեր»։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 180. Ասացեք կետադրության նշանները։

«Ո՞վ ե»— ասում եր պահակը։
«Կանգնիր, մի շարժվիր»— հրամայեց միլիցիոները։
«Ո՞վ ե ինձ հարցնողը» - ասաց դիրեկտորը։
«Յերանի, ոդաչու լինեյի»— ասում եր Ռոզան։

> Յերբ ուղղակի խոսքը հարցական կամ բացականչական ե, նրանից հետո դրվում ե գիծ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 181. Արտագրեցեք հետևյալ նախադասությունները և ցույց տվեք ուրիշի խոսքերը։

Սեդան ասում եր՝ յես գերազանցիկ եմ։
Ոֆելիան ասում եր՝ յես այսոր թատրոն կգնամ։
Ընկերս ինձ հայտնեց՝ դիրեկտորը ինձ կանչել ե։

> Յերբ ուրիշի խոսքը կարճ ե՝ անջատվում ե բութով և չակերտների մեջ չի առնվում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 182. Արտագրեցեք և ասացեք՝ խոսակիցների խոսքերը ինչո՞վ են անջատված իրարից։

— Ո՞վ ե։
— Յես եմ, Սուրիկ, դուռը բաց։
— Դուք ո՞վ եք, յես ձեզ չեմ ճանաչում։
— Յես Յերվանդն եմ՝ քո դասընկերը։
— Այս գիշերով ինչ ես ուզում։

— Լենինականից եմ յեկել, ուշ յեկանք, դրա համար յեկել եմ ձեզ մոտ գիշերելու։

> Խոսակիցների ուղիղ խոսքերը յերբ նոր տողից են սկսվում, անջատվում են գծով, վորը կոչվում է անջատման գիծ։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 183. Դրեք հետևյալ հատվածի անջատման գծերը։

Բարև, ախպեր, — ձայն է տալիս Պետին։

Ա՛յ բարին արևդ, — պատասխանում է Զատին։

Ե՛, վո՞րտեղից և ո՞ւր։

Զորագեղից եմ գալիս, ընկույզ եմ տանում ծախելու։ Իսկ դու վո՞րտեղից ես գալիս, բարեկամ։

Յես, ախպեր ջան, Ղշլաղից եմ գալիս, բուրդ եմ տանում ծախելու։

---

Հը՞, բուրդս լա՞վն եր։

Բաս ընկույզս ինչո՞վ եր պակաս, — պատասխանեց Զատին։

Յես այնպես եյի կարծում, թե միայն յես եմ աչքաբաց. բանից դուրս է գալիս, մեր աղա, դու ել ինձնից պակաս շնորհքով չես յեղել։

Ա՛յ տնաշեն, շնորհքը վոր բաժանում եյին, կարծում եյիր, թե մենակ դո՞ւ եյիր այնտեղ։

Դե՛հ, վոր այդպես է, արի ախպերանանք։

Աչքիս վրա։

Գիտե՞ս ինչ, արի միասին մի գործ անենք։

(Ըստ «Լուսաբեր»ի)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 184. Հետևյալ ուղղակի խոսքերը վերածեցեք անուղղակի խոսքերի։



Միլիցիոները կանչեց. «Քաղաքացի՛, մայթով անցի՛ր»։ Կոնդուկտորը կանչում է. «Բոլոր քաղաքացիները պետք է տոմս վերցնեն և ապա առաջ անցնեն»։

Այսօր քաղխորհրդի կողմից հայտարարված եր. «Տագնապի ժամանակ բոլոր քաղաքացիները պարտավոր են անմիջապես ազատել տրամվայը»։

Քաղաքացիներից մեկը կարդալով այդ հայտարարությունը՝ կոնդուկտորին հարցրեց. «Ի՞նչ նպատակով է տրված այդ հայտարարությունը»։ Նա պատասխանեց. «Տագնապի ժամանակ տրամվայում մնալը նույնքան վտանգավոր է, վորքան մի բացօթյա վայրում։

> Ուրիշի ուղղակի խոսքն անուղղակի խոսքի վերածելու համար ջնջվում են 1) չակերտները կամ գծերը, 2) առաջին և յերկրորդ դեմքերը փոխվում են յերրորդ դեմքի, 3) ուղղակի խոսքից առաջ ավելացվում է վոր կամ թե շաղկապը։

## 25. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 185. Հետևյալ հատվածի նախադասությունների յենթականերն ընդգծեցեք մի գծով, ստորոգյալները յերկու գծով։

Ուսումնական տարին սկսվեց։ Բոլոր դպրոցները զարդարված են։ Մեր դպրոցը գեղեցիկ է։ Զանգը հնչեց։ Աշակերտները հավաքվել են։ Դասերն սկսվեցին։ Դասերից հետո ժողով ունեցանք։ Դիրեկտորը խոսեց։ Ամեն ինչ պատրաստ է։ Դասագրքերը գնված են։ Դասարանները պատրաստված են։ Շենքը մաքրված է։ Նոր կաբինետներ են բացված։ Բոլոր ուսուցիչները ներկա յեն։

Աշխատանքները կանոնավորված են։ Բոլորն ուրախ են։ Այս օրը մեզ համար տոն է։

> Պարզ կոչվում են այն նախադասությունները, վորոնք ունեն մեկ յենթակա, մեկ ստորոգյալ և մի միտք են արտահայտում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 186. Հետևյալ նախադասություններն արտահայտեցեք սխեմաներով։

Ամառը վերջացավ։ Բոլոր դպրոցները բացվեցին։ Աշխատանքներն սկսվեցին։ Աշակերտները գնում են դպրոց։ Գերազանցիկ աշակերտներն ամեն օր պատրաստում են իրենց դասերը։

Բանվորներն աշխատում են հարվածայնորեն։ Ուսուցիչները գնացին հեռավոր եքսկուրսիայի։ Վարպետները նորոգում են մեր քաղաքի մայթերը։ Պիոներները գնում են ճամբար։

Որինակ՝ 1) Ամառը վերջացավ




2) Բոլոր դպրոցները բացվեցին






3) Աշակերտները գնում են դպրոց




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 187. Հետևյալ բառերը գործածելով վորպես յենթակա՝ գտեք համապատասխան ստորոգյալներ և կազմեցեք նախադասություններ։ Ստորոգյալներին ավելացրեք մի-մի լրացում։

Վորմնադիր, դերձակ, բժիշկ, ուսուցիչ, աշակերտ, հյուսն, հացթուխ, դարբին։

(Կարդում է, թխում է, կարում է, կառուցում է, կոփում է, սովորում է, ավանդում է)։

Որինակ՝ Ուսուցիչն ավանդում է դասը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 188. Հետևյալ ստորոգյալների համար գտեք համապատասխան յենթականեր, կազմեցեք նախադասություններ և յենթականերին ավելացրեք մի-մի լրացում։

. . . ծաղկում են . . . բացվում են . . . հասունանում են . . . աշխատում են . . . հնձում են . . . սովորում են...

(Կոլտնտեսականները, բանվորները, ուսուցիչները, աշակերտները, վարդերը, ծաղիկները)։

Որինակ՝ Գույնզգույն ծաղիկները ծաղկում են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 189. Կարդացեք հետևյալ նախադասությունները և ասացեք նրանց տարբերությունները։

Սուրիկը գնաց դպրոց։ Սուրիկը գնա՞ց դպրոց։ Սուրի՛կը գնաց դպրոց։ Յերանի՜ թե Սուրիկը դպրոց գնար։

Այս ձևերով արտահայտեցե՛ք հետևյալ նախադասությունները։

Գրիշան աշխատում է։ Սաշան սովորում է իր դասերը։ Յերվանդը նկարում է։ Սարգիսը գրում է։ Ռոզան նվագում է։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 190. Արտագրեցե՛ք և կետերի տեղը դնելով ենթականեր՝ կազմեցե՛ք նախադասություններ։

... և Սեդան յերգում են։ ... ու Գոհարը գրում են։ ... և Լուսիկը կարդում են։ ... և Եմման նվագում են։ ... և Ամալյան պատմում են։

Օրինակ՝ Վիկտորյան և Սեդան յերգում են, և այլն։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 191. Արտագրեցե՛ք հետևյալ նախադասությունները և կետերի փոխարեն մեկական ստորոգյալ էլ դուք ավելացրե՛ք։

Լևոնը կարդում է և ....։ Յերվանդը յերգում է և ....։ Գրիգորը պատմում է և ....։ Ռուբիկը նկարում է և ....։ Գեղամը յերգում է և ....։ Սեդան խաղում է և .......։

Օրինակ՝ Լևոնը կարդում է և գրում։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 192. Արտագրեցե՛ք հետևյալ նախադասությունները և ենթականերին մի-մի լրացում էլ դուք ավելացրե՛ք։

... և սպիտակ ծաղիկները բուրում են։

... և հոտավետ վարդերը բացվել են։

... և կանաչ ծառերը բողբոջում են։



Օրինակ՝ Գեղեցիկ և սպիտակ ծաղիկները բուրում են։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 193. Արտագրեցե՛ք հետևյալ նախադասությունները և ստորոգյալներին մեկական լրացում էլ դուք ավելացրե՛ք։

Ցողն իջնում է ծաղիկների և ... վրա։ Գետերը թափվում են լճերն ու ...ը։ Մարդիկ թռչում են աերոպլանով ու ...ով։ Մենք ճանապարհորդում ենք յերկաթուղով և ...ով։ Աշակերտները գրում են գրիչով և ...ով։ Փայտահատը ծառը կտրում է սղոցով ու ...ով։

Օրինակ՝ Ցողն իջնում է ծաղիկների և տերևների վրա։

## ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

| Պարզ նախադասություն | Բարդ նախադասություն |
| --- | --- |
| Արևը ծագեց։ Բոլորը զարթնեցին։ | Արևը ծագեց և բոլորը զարթնեցին։ |
| Ընկերս ձուկ էր որսում։ Յես հավաքում էի ծաղիկներ։ | Ընկերս ձուկ էր որսում, իսկ յես հավաքում էի ծաղիկներ։ |
| Նրանք հնձում էին։ Մենք կապում էինք։ | Նրանք հնձում էին, իսկ մենք կապում էինք։ |
| Այսօր դպրոց չգնացի։ Այսօր հիվանդ էի։ | Այսօր դպրոց չգնացի, վորովհետև հիվանդ էի։ |
| Յերեկ գրում էի։ Այսօր կարդում եմ։ | Յերեկ գրում էի, բայց այսօր կարդում եմ։ |

Պարզ նախադասություններն իրար հետ միանալով կազմում են բարդ նախադասություններ։ Բարդ կոչվում են այն նախադասությունները, վորոնք ունեն մեկից ավելի ենթակա և ստորոգյալ։ Բարդ նախադասություն կազմող պարզ նախադասություններն իրար հետ միանում են շաղկապներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 194. Հետևյալ պարզ նախադասություններից յերկուական նախադասություններ իրար հետ միացնելով կազմեցե՛ք բարդ նախադասություններ։

Կայծակը փայլատակեց։ Ամպրոպը պայթեց։ Անձրևը վերջացավ։ Ծառերը դեռ չեն ծաղկել։ Կարգադրությունը յեղավ։ Նրանք շարժվեցին։ Գարունը յեկավ։ Ծաղիկները բացվեցին։ Յես ցանկանում եյի գնալ։ Արդեն ուշ եր։ Զանգը հնչեցրին։ Յերեխաները գնացին դպրոց։ Վորսորդները գայլ տեսան։ Գայլին սպանել չհաջողվեց։ Մեզ ձիեր տրամադրեցին։ Մենք մեկնեցինք։

## ՄԻ ՔԱՆԻ ՅԵՆԹԱԿԱՅՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծառերը, ծաղիկները և վարդերը *բողբոջում են։ Մարգագետնում արածում են* ձիերը, յեզները և հորթերը։ Պետիկը, Սուրիկը, Յերվանդը, Ռուբիկը, Ատոմը *և* Կորյունը *միրգ եյին հավաքում։* Խնձորենին, տանձենին, բալենին *և* ընկուզենին *կանաչել են։*

> Նախադասության մեջ կարող են լինել մի քանի յենթականեր։ Այսպիսի նախադասություններ կարդալիս յենթակաները մեկը մյուսից անջատվում են փոքրիկ ընդհատումներով, վորոնք գրության մեջ արտահայտվում են ստորակետներով։
>
> Յեթե վերջին յենթակայից առաջ և, ու շաղկապ կա, ստորակետներ չեն դրվում։ Յեթե այդ շաղկապները կրկնվում են բոլոր յենթակաների հետ, նրանք իրենց վրա կրում են շեշտ և ստորակետներով անջատվում են։



Սուրիկը և Գրիշան կարդում են։




Սուրիկը, Գրիշան և Յերվանդը կարդում են։




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 195. Հետևյալ նախադասություններն արտագրելիս ընդգծեցե՛ք յենթակաները և դրեցե՛ք ստորակետներ, ուր վոր հարկավոր է։

Զաբելը Ցողիկը Քնարիկը և Արևհատը գրում են։
Ակումբում տրվում են ներկայացումներ զեկուցումներ դասախոսություններ և կինոնկարներ։
Մեր գործարաններում շինվում են կոմբայններ տրակտորներ տանկեր ավտոմոբիլներ և աերոպլաններ։

Կասպից ծովը թափվում են և՛ Ուրալը և՛ Վոլգան և՛ Թերեքը և՛ Կուրը և՛ Արագը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 196. Արտագրելիս ենթականերն ընդգծեցե՛ք մի գծով, իսկ ստորոգյալները՝ երկու գծով։

Սուրիկը կարդում է, գրում է և նկարում է։ Դերձակը չափում է, կտրում է, կարում է և պատրաստում է։ Գրիշան վեր կացավ, հագնվեց, լվացվեց, թեյեց և գնաց դպրոց։

Նախադասության մեջ կարող են լինել մի քանի ստորոգյալներ։ Այսպիսի նախադասություններ կարդալիս ստորոգյալները մեկը մյուսից անջատվում են փոքրիկ ընդհատումներով, վորոնք գրության մեջ արտահայտվում են ստորակետներով։ Յեթե վերջին ստորոգյալից առաջ և, ու շաղկապ կա, ստորակետ չի դրվում։ Յեթե այդ շաղկապները կրկնվում են բոլոր ստորոգյալներից առաջ, այն ժամանակ իրենց վրա շեշտ են ընդունում և անջատվում ստորակետով։

Կոմբայնը հնձում և մանրում է։






Օրինակ՝ կոմբայնը հնձում, մանրում և զտում է։




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 197. Հետևյալ նախադասությունները սխեմաների վերածեցե՛ք։

Յերվանդը հագնվեց, պատրաստվեց և գնաց թատրոն։ Վորմնադիրը տաշում է, հղկում է և շարում է պատերը։ Հյուսնը չափում է, կտրում է, տաշում է, ծակում է և շինում է նստարաններ։ Փոթորիկը բարձրացավ, մրրկեց և պոկեց դարավոր կաղնին։ Կոլտնտեսականը և՛ վարում է, և՛ ցանում է, և՛ քաղում է, և՛ մանրում է։

Օրինակ՝ կարմիր կապույտ և սպիտակ ծաղիկները ծաղկեցին։




Կարմիր, կապույտ, սպիտակ և դեղին ծաղիկները ծաղկեցին։






Ցողը շողշողում է խոտերի և ծաղիկների վրա։




Ցողը շողշողում է խոտերի, ծաղիկների և տերևների վրա։



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 198. Արտագրեցեք և ընդգծեցեք միևնույն հարցին պատասխանող լրացումները, դրեք կետադրության նշանները։

Մենք ստացանք գիրք տետրակ գրիչ Թանաք ռետին և մատիտ Կոլտնտեսությունն ստացավ ցորեն գարի հաճար ծխախոտ և բամբակ Նրանք աշխատում էին մուրճով կացնով լոմով ուրագով և սղոցով Յես դիմեցի Սուրիկին Վաչեյին Արամին և Գագիկին Մենք սովորում ենք դըպրոցում ակումբում թատրոնում կինոյում և համալսարանում Հարվածայիններն իրենց աշխատանքը կատարեցին լավ մաքուր և գեղեցիկ Ձյունի շերտը ծածկել է լեռները դաշտերը և հովիտները

Մի նախադասության մեջ միևնույն պաշտոն կատարողները կոչվում են նախադասության բազմակի անդամներ։

Բազմակի անդամները կարող են կապվել և, ու, թե, կամ շաղկապներով։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 199. Արտագրելիս շարունակեցեք թվարկումը։

Անտառում աճում են յեղևնիներ, սոճիներ . . . .
Կոլտնտեսությունում կան տրակտորներ, ավտոներ. .
Դպրոցի համար գնեցին տետրակներ, գրքեր և . .
Դպրոցում կարդում են, գրում են . . . . . . .
Կարի գործարանում չափում են, կտրում են . . .
Վորմնադիրը տաշում է, հղկում է . . . . . . .
Անտառում ապրում են գայլերը, աղվեսները . . .
Տաք յերկրներ չվում են ծիծեռնակներ, սարյակներ . . . . . . . . . . . . . . . . . . .



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 200. Արտագրելիս ընդգծեցեք բազմակի անդամները և դրեք կետադրության նշանները։

Խորհրդային Միության մեջ մարդիկ աշխատում են վոչ թե կապիտալիստների համար այլ իրենց համար Նա գրեց թե պատմվածքներ թե վոտանավորներ և թե վեպեր Նա գրեց վոչ թե պոեմներ այլ պիեսներ Յես յեղա անտառում դաշտում և հովիտներում Յես յեղա վոչ թե դաշտում և հովիտներում այլ անտառում Յես գրում եմ ու աշխատում եմ Յես վոչ թե գրում եմ այլ աշխատում եմ Նա յերգում ու պարում է Դու գրում կամ նկարում ես Դու թե գրում թե նկարում ես։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 201. Լրացրեք հետևյալ բարդ նախադասությունները.

Փոթորիկը բարձրացավ և ծովը . . . . . . . . .
Բոլորը գնալու յեն, իսկ Սուրենը . . . . . . .
Բոլորը խոսեցին, սակայն Գրիշան . . . . . . . .
Ուզում էի գնալ, բայց . . . . . . . . . . . . .
Յես աշխատում եմ, իսկ դու . . . . . . . . . .
Դու գալու յես ինձ հետ կամ . . . . . . . . .
Դու ուզում էիր գալ, ապա . . . . . . . . . .
Մեր պլանները կատարված են, ուրեմն . . . . .
Յես կարդալու չեմ, վորպեսզի . . . . . . . . .
Յես գնալու չեմ դպրոց, վորովհետև . . . . . . .
Նա աշխատում է անընդհատ, վոր . . . . . . . .
Նա իր պլանը կկատարի, յեթե . . . . . . . . . .
Սուրիկն իր աշխատանքները վերջացրել է թե . .
Յես գնում եմ թատրոն, մինչդեռ . . . . . . . . .

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 202. Հետևյալ հոդվածից ջոկեցեք բարդ և պարզ նախադասությունները և գրեցեք առանձին սյունակներում։

Բարդ նախադասություններն իրարից անջատելով կազմեցեք պարզ նախադասություններ։

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց Թուխ ամպերի հետ.
Վրան-վրանի հետևից բազմ
Ծաղիկների մեջ գույն-գույն սփռավետ.
Ալաչուխ դագա, անվերջ վրաններ,
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպես ծեր արծվի կարկառած բներ,
Հենվում են մեկ-մեկ բարձր քարափին։
Գուգարք սարերի սիգավետ լանջին
Բազմել են հայի Թուրքի բինաներ,
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին
Դեռ յերերում են ուղտի քարվաններ.
Խրխնջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն էլ իրենց յուրդն են ճանաչում.
Մայում է անուշ ամլիկը գառան
Սարեր ու ձորեր նորից կյանք առան։

(Վ. Միրաքյան)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 203. Ինքներդ կազմեցեք 4 բարդ նախադասություններ, վորոնք միացված լինեն և, ու, իսկ, բայց, ուրեմն, վոր, վորովհետև, վորպեսզի, սակայն, յերբ շաղկապներով։

## 26. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ

Հինգ նոր և գեղեցիկ ավտոմոբիլներ արագորեն սլանում են դեպի գեղածիծաղ Ծաղկաձորը։

Հինգ—քանակական թվական։

Նոր—վորակական ածական։



Յեվ—շաղկապ։

Գեղեցիկ—ածական։

Ավտոմոբիլներ—հասարակ գոյական, հոգնակի ուղղական հոլով։

Արագորեն—ձև ցույց տվող մակբայ։

Սլանում են—բայ, ներկա ժամանակ, հոգնակի թիվ, 3-րդ դեմք։

Դեպի—կապ։

Գեղածիծաղ—ածական։

Ծաղկաձորը—հատուկ գոյական անուն, հայցական հոլով, յեզակի թիվ։

| |
|---|
| Նախադասությունն ըստ խոսքի մասերի վերլուծելիս բառերը վերցվում են հերթական կարգով և նրանց դիմաց գրվում, թե վոր տեսակի խոսքի մաս են ու ինչ փոփոխություններ են կրել։ |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 204. Հետևյալ նախադասությունները վերլուծեցեք ըստ խոսքի մասերի.

Մեր կոլտնտեսության առաջին բրիգադիրը և 4 հարվածային ընկերներն այսոր գերակատարեցին պլանները։

Մեր դպրոցի աշակերտները և ուսուցիչները հանձն են առել տարին փակել առանց թույլերի։

Մեր դպրոցի տարեվերջի քննություններն արդեն սկսվել են։

Այս տարի աշխատանքներն ավելի լավ են կազմակերպված։

Մեր ավարտական դասարանի աշակերտները քննություններից հետո գնալու յեն հեռավոր եքսկուրսիա։

# 27. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԱՆԴԱՄՆԵՐԻ

Հինգ նոր և գեղեցիկ ավտոմոբիլներ արագորեն սլանում են դեպի Ծաղկաձոր։

Ավտոմոբիլներ — յենթակա։

Սլանում են — ստորոգյալ։

Հինգ, նոր և գեղեցիկ — յենթակայի լրացումներ։

Արագորեն, դեպի Ծաղկաձոր — ստորոգյալի լրացումներ։

> Նախադասությունն ըստ անդամների վերլուծելիս 1. ո՞վ, ի՞նչ հարցերով գտնում ենք յենթական. 2. ի՞նչ է անում, ի՞նչ է լինում հարցերով գտնում ենք ստորոգյալը. 3. հետո գտնում ենք յենթակայի լրացումները և 4. գտնում ենք ստորոգյալի լրացումները։

Յեթե տրված է մի նախադասություն, վոր ունի յենթակա, ստորոգյալ, յենթակայի լրացում և ստորոգյալի լրացում, ստացվում է հետևյալ սխեման։






ՎԱՐԺՈՒԹՈՒՆ 205. Հետևյալ նախադասությունները վերլուծել ըստ նախադասության անդամների և կազմել նրանց սխեմաները։

Մեր կոլտնտեսության պարտեզի գեղեցիկ վարդերը զարդարեցին հերոս օդաչուների պանծալի կրծքերը։

Վիթխարի տրակտորները հերկում են կոլտնտեսության լայնատարած դաշտերը։

Այսօր մեր բրիգադը սոցմրցման մեջ մտավ մեր կոլտնտեսության յերկրորդ բրիգադի հետ։ Մենք արդեն վերջացրինք մեզ տված գարնանացանի պլանը։

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 206. Հետևյալ համր սխեմաների համաձայն կազմեցեք նախադասություններ։






ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 207. Հետևյալ նախադասությունները վերլուծել թե ըստ խոսքի մասերի և թե ըստ նախադասության անդամների: Նախքան վերլուծման անցնելը պետք է որոշել պարզ և բարդ նախադասությունները:

Ամեն տեղ լսում է գարնան վերածնող շնչի ուժն ու զորությունը (Ն. Դ.): Յեվ մի խորունկ գայրույթ, վառվող կատաղություն բռնկվում էր մի ժամանակ մեծ, առատ տան զավակների սրտի մեջ (Փափ.):

Այնտեղ տիրում են անսովոր շարժում ու իրարանցում (Շիրվ.):

Հեր ու վորդի նստած եյին բազազ Արտեմի խոհանոցում:

Են ժամանակ բազազն ու իր կինը վիճում եյին ներսը:

Տիկին Նատոն չեր համոզվում: Նա արտասվելով անիծում եր իր բախտը:



Ես աղմուկի վրա տիկինը դուրս յեկավ.
Բազազը Գիքորին ձեն տվեց:
Թմթմփացնելով Գիքորը ներս մտավ:

(Հ. Թումանյան)

Յեվ դինամիտն անտառում առավոտյան որոտաց,
Սանթրոսի տան քարաշեն պատերն ահով դողացին:
Տանձենու տակ թափառող արջը փախավ չորեքթաթ:
«Ել ահ չկա» մռլտաց փայտ հավաքող գյուղացին:
Ու վեր թռան մարմարի մանր-սպիտակ կտորներ,
Ոդում թափով պարեցին ու շաղ յեկան չորս բոլոր:
Արձագանքը դղրդաց ու սլացավ սարնիվեր,
Անտառում իր հաղթական արշավանքը յերգելով:
Արձագանքը դղրդաց ու սլացավ սարեսար,
Հասավ խոժոռ ձորերին, քարափներին արևոտ,
Ու մոտակա գյուղերին յերգի նման խանդավառ
Հաղորդեց նոր մի կյանքի աղմկալից առավոտ:

(Ն. Զարյան)

Աշունն ել յեկավ Գուգարք աշխարհում,
Սարին ու դաշտին այլ կյանք է յեռում.
Խուզելով գառան, վոչխարի բուրդը,
Քոչել է բինեն, թողնելով յուրդը:
Լեռներից զվարթ գիրացած հոտեր
Ձմեռվան համար իջել են դաշտեր:
Ցուրտերը դատարկ սելին են տալիս,
Աղբյուր ու ծաղիկ վողբում են, լալիս.
Մենակ խաղում է, թռչկոտում պախրան,
Սարեր ու ձորեր մնացին նրան:
Արծիվն ել տխուր նստած ժայռերին՝
Վորսեր է փնտրում իր սոված փորին:

(Վ. Միրաքյան)

# 28. ԲԱՌԱՑԱՆԿ

## Գրվում է Դ

արձակուրդ
ահագնադղորդ
անընդհատ
ավելորդ
արդ
արդար
ար դի
արդեն
արդյոք
արդյունք
արդուկ
բարդ
բարդություն
բարդացնել
բերդ
բերդապահ
բրդել
գդալ
գդակ
գնորդ
լերդ
լյարդ
լիմոնադ
լծորդ
դղրդյուն
զարդ
զարդարանք
զուգորդել
թակարդ
խառնուրդ
խարդախ
խարդավանք
խլուրդ
խնդիր
խնդրառություն
խնդրել
խնդրարկու
խորանարդ
խորդուբորդ
խորհրդածություն
խորհրդական
խորհրդանիշ
խորհրդավոր
ծաղկազարդ
կարդալ
կոկորդ
կախարդ
կցորդ
հագուրդ
հակառակորդ
հաջորդ
հաջորդել
հարդ
հանդերձ
հետնորդ
հինգերորդ
հորդա
հորդառատ
հորդորել
հորդորանք
հորեղբորորդի
հրդեհ
հրդեհաշեջ
հարդարել
ճանապարհորդ
ճլորդի
մակարդակ
մակարդել
մարդատյաց
միջընդմեջ
մերթընդմերթ
միլիարդ
միջնորդ
բիլիարդ
մնացորդ
յերդիկ
յերդմնազանց
յերդում
յերրորդ
յերկրորդ
յերեկորդ





յերիտասարդ
նախամարդ
նախանձախնդիր
նախնդիր
նախորդ
Նավասարդ
նավորդ
լողորդ
նամարդ
նյարդ
շահախնդիր
շոկոլադ
շրինդ
ոդանցք
ոդաչու
ոդափոխություն
ոդերևութաբանություն
ուշադրություն
չորրորդ
պակասորդ
ջարդել
սարդ
սպրդել
վաղորդյան
վաղորդ
վարդ
վարդենի
Վարդան
Վարդանուշ
Վարդուհի
վրեժխնդիր
վեցերորդ
վորդի
վորդ
տասներորդ
տղամարդ
Տրդատ
փոխանորդ
քանիերորդ
քանորդ
քառորդ
քինախնդիր
քսաներորդ
բուրդ
միջնորդ

## Գրվում է Գ

ահագին
Ավագ
արձագանգ
արտակարգ
Բագու
Բագրատ
բարգավաճ
բարենորոգում
Գարեգին
Գեվորգ
դասակարգ
եգուց
զուգընթաց
Թորգոմ
լինգ
ծագել
ծեգ
կարագ
կարգին
կարգ
կարգադրել
կարգապահ
կենտրոնաձիգ
հանգչել
հեռաձիգ
հոգս
հոգալ
հոգաբարձու
հոգեառ
հոգեբանություն
հոգեբուղխ
հոգեպարար
հոգի

## Գրվում է Գ

| | | |
|---|---|---|
| հոգնակի | մարագ | որակարգ |
| հոգնել | Մարգարիտ | ուղղաձիգ |
| հրաձիգ | մուգ | պարերգ |
| հրձիգ | հետաձգել | Սարգիս |
| ձագ | յերգ | սուգ |
| ձագար | յերգեցիկ | սպունգ |
| ձգել | Նորոգել | սրինգ |
| ձգտել | շոգ | վարագույր |
| ձգձգել | ոգուտ | վոգի |
| ձիգ | ոգնել | վոռոգել |
| ճրագ | ոգտավետ | |

## Գրվում է Ղ

| | | |
|---|---|---|
| աղբ | գաղտագողի | հղփանալ |
| աղբակույտ | գաղտնապահ | մեղք |
| աղյուս | գաղտնի | մեղսակից |
| աղբյուր | գողտուկ | յեղբայր |
| աղճատել | դղրդյուն | յեղկելի |
| աղջամուղջ | դողդոջ | նողկանք |
| աղջուր | զղջալ | նողկալի |
| աղտ (կեղտ) | թուղթ | շղթա |
| աղտոտ | թղթակցել | շաղգամ |
| աղքատ | թղթապանակ | պղպեղ |
| բաղդատել | խեղդել | պաղպաջել |
| բաղկանալ | խեղճ | պղտոր |
| բողկ | խղճալ | պղպջակ |
| բաղձանք | կաղկանձել | պողպատ |
| գաղթ | կողք | վողբ |
| գաղջ | հեղձուցիչ | վողբերգություն |



## Գրվում է Ղ

| | | |
|---|---|---|
| վողջ | փղձկալ | քաղցր |
| վողջույն | փողպատ | քաղց |
| տաղտուկ | փողփողել | |
| տաղտկալի | քաղհան | |

## Գրվում է Ձ

| | | |
|---|---|---|
| արձան | բարձրաբերձ | հեղձուկ |
| արձակուրդ | գանձ | հնձան |
| արձակ | գեղձ | հնձել |
| աղանձ | դարձ | հորձանք |
| փորձանք | դարձյալ | հունձ |
| դարձ | դարձվածք | մաղձ |
| անդրադարձ | դեղձ | մանկաբարձ |
| անձկալի | դեղձանիկ | մղձավանջ |
| անձնավորություն | դերձակ | նախանձ |
| անձնատուր | դերձան | շնչահեղձ |
| անձնուրաց | Համբարձում | ոձ |
| անձանձիր | ընդարձակ | ոձիք |
| անձուկ | ընձենի | պղինձ |
| հանձնել | ընձեռնել | սանձ |
| առաձգական | թանձր | սանձարձակ |
| ատաղձ | ինձ | սինձ |
| բաղձանք | լորձ | վարձ |
| բաղձալ | խանձարուր | վարձկալ |
| բացարձակ | խանձել | վարձկան |
| բարձել | խուրձ | վարձահատույց |
| բրինձ | հանդերձ | վերամբարձ |
| ընձյուղ | հանդերձարան | վեհանձն |
| բարձ | հանդերձյալ | տարեդարձ |
| բարձր | հատավարձ | |

## Գրվում է Ջ

այծեղջյուր
աղջամուղջ
աղջիկ
անխոնջ
անուրջ
անջատ
աջ
աջակցել
աջակողմյան
առաջ
առաջագնաց
առաջադեմ
առաջադրություն
առաջապահ
առաջարկ
առաջիկա
առաջին
առաջուց
առեջք
առջև
արջ
արջառ
արջասպ
բնաջինջ
գաղջ
գեջ
դողդոջ
էջ
էջք

գիջել
գղջալ
ընդառաջ
ընդմիջել
թրջել
թրթնջուկ
ժրաջան
իջևան
իջնել
իվերջո
լանջ
լանջապանակ
լուրջ
խխունջ
խոխոջյուն
խրխինջ
խարջ
կամուրջ
հաջել
հաջող
հորջորջել
հորանջել
հրշեջ
մարջան
միջոց
մեջընդմեջ
մեջ
մեջք
մեջտեղ

միջակ
միջազգային
միջակետ
միջամտել
միջանկյալ
միջանցք
միջավայր
միջատ
միջարկություն
միջև
միջնադեպ
միջնակ
միջորեական
միջորյա
միջուկ
մղձավանջ
մշտնջենական
մունջ
մրմնջալ
մրջյուն
յեղջերու
յեղջյուր
յերջանիկ
յերինջ
նահանջ
նարինջ
նինջ
շեղջ
շշունջ



## Գրվում է Ջ

շուրջ
որընդմեջ
չղջիկ
պահանջ
ստերջ
վայրէջք
վերջ
վերջաբան

վերջալույս
վերջակետ
վերջիվերջո
վողջ
վողջագուրանք
վողջակեզ
վորջ
վրնջուն

տրտունջ
փունջ
քաջ
քաջություն
քաջքեր
քրքիջ

## Գրվում է Բ

Աբգար
արբանյակ
արբեցություն
արբունք
բորբ
Գաբրիել
գրաբար
դարբին
ըմբշամարտ
թամբ
թամբել

թմբկահար
ինքնաբերաբար
խաբեբա
խաբել
խաբեյություն
խաբուսիկ
համբերել
համբույր
մտախաբություն
յերեսսրբիչ
ներբող

ներբան
շաբաթ
ուրբաթ
պատահաբար
սուրբ
սրբագործել
սրբագրել
սրբել
սրբիչ
վորբ

---

ԱՐԽԻՎ

# ՑԱՆԿ


Էջ

1. Կրկնություն չորրորդ դասարանում անցածի . . . . 3
2. Անձնական դերանուններ . . . . . . . . 6
3. Անձնական դերանունների հոլովումը . . . . . . . . 8
4. Բայ . . . . . . . . . . . . . . . . 15
5. Բայի խոնարհում . . . . . . . . . . . . . . 19
6. Բայերի ներկա, անցյալ և ապառնի ժամանակները . . 23
7. Բայի ժխտական ձևը . . . . . . . . . . . . 30
8. Բայի հրամայական ձևը . . . . . . . . . . . 34
9. Բայի հրամայականի ժխտական ձևը . . . . . . . . . 37
10. Բայի անորոշ ձևը . . . . . . . . . . . . . . 40
11. Թվական . . . . . . . . . . . . . . . . . 44
12. Մակբայ . . . . . . . . . . . . . . . . . 50
13. Կապ . . . . . . . . . . . . . . . . . . 57
14. Շաղկապ . . . . . . . . . . . . . . . . . 61
15. Ձայնարկություն . . . . . . . . . . . . . . 64
16. Կոչական . . . . . . . . . . . . . . . . 66
17. Հնչյունափոխություն . . . . . . . . . . . . 71
18. Բառակազմություն . . . . . . . . . . . . . 75
19. Բարդ բառերի կազմության ձևերը . . . . . . . . 80
20. Հապավումների ձևերը . . . . . . . . . . . . 80
21. Ուղղագրական վարժություններ . . . . . . . . . 83
22. Տողադարձ . . . . . . . . . . . . . . . . 90
23. Բառագրքույկից օգտվելու վարժություն . . . . . . . 91
24. Ուրիշի խոսք . . . . . . . . . . . . . . . 92
25. Նախադասության վերլուծություն . . . . . . . . . 97
26. Նախադասության վերլուծություն ըստ խոսքի մասերի 110
27. Նախադասության վերլուծություն ըստ անդամների . . 112
28. Բառացանկ . . . . . . . . . . . . . . . . 116





Պատ. խմբագիր՝ Գ. Սեվակ
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ցե. Տեր-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Ն 2268 Հրատ. №4896.
Պատվեր 435 Տիրաժ 45000.
Թուղթ 62×94 Տպագր. 8 մամ.
Մեկ. մամ. 23 256 նիշ
Հանձնված է արտադրության 28 ապրիլի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 26 հուլիսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Երևան Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0928073

50

3 СЕН 1939

431

11
28413

Գինը 1 ռ.
Կազմը 50 կ.

Т. ШАХБАЗЯН
Армянский язык
грамматика и правописание
для IV класса
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.